

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ**«Սահմանադրական ինքնությունը» եվրոպականացման, հետխորհրդային տրանսֆորմացիայի և տարածաշրջանային ինտեգրման գործընթացների համատեքստում. Հայաստանի Հանրապետության դեպքը¹**

ԱՆՆԱ ԽՎՈՐՈՍՅԱՆԿԻՆԱ

*«Գիևտ-Մոհիլա Ակադեմիա» ազգային համալսարան, Ուկրաինա
Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան, Հայաստան*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել «սահմանադրական ինքնություն» հասկացության վերաբերյալ առկա գիտական մոտեցումները, ինչպես նաև դրա կիրառելիությունը հետխորհրդային տրանսֆորմացիայի, եվրոպականացման և տարածաշրջանային ինտեգրման գործընթացների վերլուծության ժամանակ: Ուսումնասիրելով ակադեմիական գրականության մեջ ներկայացված բազմաթիվ սահմանումներ՝ առաջարկվում է «սահմանադրական ինքնությունը» դիտարկել որպես չորս փոխկապակցված իմաստների համադրություն՝ սահմանադրության ինքնության, ժողովրդի կամ երևակայական քաղաքական հանրության ինքնության, հասարակության կամ իրական քաղաքական հանրության սահմանադրական ինքնության, պետական սահմանադրական կարգի ինքնության՝ այլ իրավակարգերի հետ փոխհարաբերություններում: Նշվում է, որ այդ չորս չափումներում դիտարկվելու դեպքում «սահմանադրական ինքնություն» հասկացությունը կարող է ծառայել որպես արդյունավետ գործիք՝ անցումային շրջանում գտնվող երկրներում տրանսֆորմացիայի գործընթացների վերլուծության համար: Դա վերաբերվում է ինչպես ներքին (օրինակ, սահմանադրական մշակույթի տրանսֆորմացիա), այնպես էլ արտաքին (օրինակ, ինտեգրում) գործընթացներին: Ներկայացված են խնդրի տեսական հիմքերը և ձևակերպված են հարցադրումներ հետազոտությունների իրականացման համար:

¹ Հոդվածը «Հետխորհրդային տրանսֆորմացիայի քառորդ դարը. արդյունքներ և հեռանկարներ» (հոկտեմբերի 28-29, 2016թ., Երևան, Հայաստան) խորագրով միջազգային գիտաժողովին ներկայացված գեկույցի լրամշակված տարբերակն է: Այն հիմնված է ընթացիկ հետազոտական նախագծի վրա, որի նախնական արդյունքները ներկայացվել են «Անցումային շրջանում գտնվող սահմանադրական մշակույթները. սահմանադրական ինքնությունն ու արժեքները հետխորհրդային տարածքում» դասընթացի շրջանակներում (Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոն, Ստենֆորդի համալսարան, ԱՄՆ, մարտ-հունիս, 2017թ.):

Բանալի բառեր

Սահմանադրական ինքնություն, սահմանադրական մշակույթ, հետխորհրդային տրանսֆորմացիա, սահմանադրական արժեքներ, եվրոպականացում, ինտեգրում

Նախաբան

Հոդվածի նպատակն է ներկայացնել և վերլուծել հետխորհրդային տրանսֆորմացիայի, եվրոպականացման և տարածաշրջանային ինտեգրման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում՝ դրանք դիտարկելով «սահմանադրական ինքնության» զարգացման գործընթացների պրիզմայով:

Թեև «սահմանադրական ինքնություն» հասկացությունը հաճախ կիրառվում է արդի իրավական (նախևառաջ՝ դատական²) և քաղաքական դիսկուրսում, այդ հասկացության միջազգայնորեն ընդունված միասնական ընկալում դեռևս չկա, և դրա իմաստը շարունակում է մնալ անորոշ³: Որոշ հետազոտողներ նույնիսկ

² Ա. Սլեզինսկա-Միմոնն առանձնացնում է դատական գործընթացներում «սահմանադրական ինքնություն» հասկացության կիրառման երեք հիմնական ոլորտ՝ 1) սահմանադրական փոփոխությունների լեգիտիմության վերաբերյալ որոշումներում, 2) սահմանադրական միգրացիայի լեգիտիմության և տարբեր դատարանների միջև երկխոսություն ծավալելու վերաբերյալ որոշումներում, 3) վերազգային կազմակերպություններին ինտեգրման վերաբերյալ որոշումներում: (**Śledzińska-Simon A.**, Constitutional identity in 3D: A model of individual, relational, and collective self and its application in Poland, *International Journal of Constitutional Law*, 2015, **13**, 1, 124–155).

³ Միշել Ռոզենֆելդը համեմատական սահմանադրական իրավունքի վերաբերյալ իր ձեռնարկի «Սահմանադրական ինքնություն» բաժինը սկսում է հետևյալ հաստատագրմամբ. «Սահմանադրական ինքնությունը վիճահարույց հասկացություն է, քանզի չկա միասնական մոտեցում դրա նշանակության կամ կիրառելիության վերաբերյալ» (**Rosenfeld M.**, Constitutional Identity, *Oxford Handbook on Comparative Constitutional Law* (eds.), OUP, 2012, p. 756; **Saiz Arnaiz A., Alcobero Llivina C.**, Why Constitutional Identity Suddenly Matters: A Tale of Brave States, a Mighty Union and Decline of Sovereignty, *Saiz Arnaiz A., Alcobero Llivina C. (eds.), National Constitutional Identity and European Integration*, Intersentia, 2013, pp. 1-3; **Marti J. L.**, Two Different Ideas of Constitutional Identity: Identity of the Constitution v. Identity of the People, *Saiz Arnaiz A., Alcobero Llivina C. (eds.), National Constitutional Identity and European Integration*, Intersentia, 2013, p. 18; **Śledzińska-Simon A.**, Constitutional identity in 3D: A model of individual, relational, and collective self and its application in Poland, *International Journal of Constitutional Law*, 2015, **13**, 1, 124–155, <https://doi.org/10.1093/icon/mov007> (01.08. 2016).

կասկածում են, թե արդյոք այն առանձնահատուկ երևույթ է՝ արժանի հայեցակարգային դասի, և ընդգծում են դրա ոչ հստակ բնույթն ու նման այլ հասկացություններից տարբերելու բարդությունը⁴:

Եվրոպական Միության (ԵՄ) և դրա անդամ երկրների միջև հարաբերությունների համատեքստում վերջիններիս *ազգային* սահմանադրական ինքնությունը հաճախ դիտարկվում է որպես «եվրոպականացման»⁵ (ԵՄ-ի կամ եվրոպական սահմանադրական ինքնության⁶) գործընթացը սահմանափակող գործոն: Հոդվածում փորձ է արվում բացահայտել, թե արդյոք «սահմանադրական ինքնություն» հասկացությունը կարող է օգնել բացահայտել եվրոպականացման և ինտեգրման գործընթացների դինամիկան ԵՄ-ի սահմաններից դուրս՝ հետխորհրդային տարածքում: Հոդվածում, մասնավորապես, ուսումնասիրվում է Հայաստանի Հանրապետության դեպքը: Չնայած իր հետադարձին (U-turn⁷) և Եվրասիական տնտեսական միությանն (ԵՏՄ) անդամակցությանը՝ Հայաստանը՝ որպես Արևելյան գործընկերության (ԱլԳ) մասնակից երկիր, շարունակում է ակտիվ երկխոսություն ծավալել ԵՄ-ի հետ: Դրա արդյունք էրն ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ստորագրումը⁸: Ստիպված լինելով կատարել բարդ աշխարհաքաղաքական ընտրություն՝ Հայաստանը՝ որպես հետխորհրդային երկիրը, կարող է

⁴ **Pavone T.**, Constitutional Identity: An Overview and Some Conceptual Concerns (4/23/2014), https://scholar.princeton.edu/sites/default/files/tpavone/files/jacobsohn-constitutional_identity_critical_review.pdf (30.06.2017).

⁵ Հետազոտության նպատակներից էլնելով՝ եվրոպականացումը կարելի է սահմանել որպես ներպետական արձագանք ԵՄ-ի փոխակերպող ուժին, որի արդյունքում եվրոպական նորմերը, արժեքներն ու պրակտիկան ներմուծվում են ներպետական իրավական համակարգ:

⁶ Այդ իմաստով «ազգային սահմանադրական ինքնություն» հասկացությունը հատկապես կիրառում են Գերմանիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Լիտվայի սահմանադրական արդարադատության մարմինները:

⁷ EU Officials Warn Yerevan over ‘U-Turn’, Radio Free Europe Radio Liberty (4 September, 2013), <http://www.rferl.org/a/armenia-eu-customs-union/25095145.html> (30.11.2016).

⁸ Joint Press Release by the European Union and Republic of Armenia on the Initialling of the EU-Armenia Comprehensive and Enhanced Partnership Agreement (Yerevan, 21 March 2017), https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/23120/joint-press-release-european-union-and-republic-armenia-initialling-eu-armenia-comprehensive_en (30.06.2017).

դիտարկվել տարբեր մակարդակներ ու վեկտորներ ունեցող հետխորհրդային տրանսֆորմացիայի, միջազգայնացման, եվրոպականացման և ինտեգրման փոխկապակցված գործընթացների ուսումնասիրության առանձնահատուկ լաբորատորիա⁹: Հոդվածում ուսումնասիրվում են հետխորհրդային տրանսֆորմացիայի և եվրոպականացման փոխկապակցված գործընթացները Հայաստանում՝ «ազգային սահմանադրական ինքնության» զարգացման պրիզմայի միջոցով: Համեմատական վերլուծություն է իրականացվում Հայաստանի, այլ հետխորհրդային երկրների (մասնավորապես՝ Մոլդովայի և Ուկրաինայի¹⁰) ու ԵՄ անդամ հետսոցիալիստական երկրների միջև:

Հայաստանը հայտարարում է, որ հավատարիմ է ընդհանուր եվրոպական արժեքներին¹¹, որոնք այսօր ձեռք են բերել գլոբալ կամ ունիվերսալ նշանակություն: Այնպիսի արժեքներ, ինչպիսիք են իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը, լիարժեք ճանաչված արժեքներ են և ամրագրված են հետխորհրդային երկրների զգալի մասի սահմանադրություններում: Միաժամանակ, այդ արժեքների ընկալումը, կիրառման մեխանիզմներն ու պրակտիկան և այն, ինչն ամրագրված է սահմանադրությամբ, երբեմն զգալիորեն տարբերվում են միմյանցից: Այլ կերպ ասած, եթե ընդունենք, որ եվրոպականացման արդյունավետությունը կարող է գնահատվել նորմի ընտրության, փոխառման և կիրառման մակար-

⁹ Ինչպես նշում են Դելկուրը և Վոլչուկը, «Արևելյան գործընկերության շրջանակում ԵՄ-ի ազդեցության վերաբերյալ հարուստ գրականության մեջ Հայաստանն առավել քիչ ուսումնասիրված երկրներից է»: **Delcour L., Wolczuk K.,** The EU's Unexpected 'Ideal Neighbour'? The Perplexing Case of Armenia's Europeanisation, *Journal of European Integration*, 2015, 37, 4, 491-507.

¹⁰ Բոլոր երեք երկրները ԱԳ-ի անդամ երկրներ են: Միաժամանակ, ԱԳ-ի շրջանակներում դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է եվրոպականացման և ԵՄ-ի հետ համագործակցության առանձնահատուկ դեպք: ԵՄ-ի հետ ստացացված հարաբերություններ հաստատելու ուղղությամբ Մոլդովայի ճանապարհը համեմատաբար հարթ էր: Ուկրաինան, չնայած քաղաքական, իրավական և տնտեսական բարեփոխումների «զավագույն իրականացնողներից է», Ստացացման համաձայնագրի ստորագրմանն ի վերջո հասավ հեղափոխության ճանապարհով: Հայաստանն ընտրեց ԵՄ-ին անդամակցությունը, սակայն շարունակում է պահպանել բարիդրացիական հարաբերություններ ԵՄ-ի հետ, մասնավորապես՝ քաղաքական երկխոսության ոլորտում:

¹¹ ՀՀ Սահմանադրություն, առաջին, երկրորդ և երրորդ հոդվածներ:

դակնեղում¹², ապա վերջին մակարդակն առավել խնդրահարույց է հետխորհրդային երկրներում՝ եվրոպական արժեքների կիրառման ժամանակ: Ո՞րն է դրա պատճառը: Արդյո՞ք դա պայմանավորված է Հայաստանի սահմանադրական ինքնությամբ, որն արմատացած է հայ ժողովրդի քաղաքական և իրավական մտածողության մեջ, Հայաստանի խորհրդային և նախախորհրդային անցյալով, որը կարող է խոչընդոտել կամ դյուրացնել եվրոպական նորմերի և արժեքների արդյունավետ փոխառման և/կամ դրանց պատշաճ կիրառման գործընթացը: Արդյո՞ք ազգային սահմանադրական ինքնության առանձնահատկություններն ազդում են ինտեգրման այս կամ այն նախագծին (ԵՄ կամ ԵՏՄ) նախապատվություն տալու վրա: Ի՞նչ ճանապարհով է սահմանադրական ինքնությունը որոշում երկրի համապատասխանության մակարդակը այդ նախագծերի պահանջներին և չափանիշներին:

Հոդվածի նպատակն է ներկայացնել «սահմանադրական ինքնության» բարդ կառուցվածքը՝ որպես հետխորհրդային տրանսֆորմացիայի և եվրոպականացման գործընթացների հետագա ուսումնասիրությունների տեսական շրջանակ: Այդ մոտեցումը հիմնված է, այսպես կոչված, «վերլուծական էկլեկտիցիզմի»¹³ վրա, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրել տարաբնույթ փոխկապակցված սոցիալական հարաբերություններ, մեխանիզմներ և երևույթներ՝ պահպանելով խիստ մոտեցում տարբեր տեսական ավանդույթների նկատմամբ՝ աշխարհի իրական պատկերը հասկանալու համար¹⁴:

Համադրելով ակադեմիական գրականության մեջ ներկայացված սահմանումները՝ «սահմանադրական ինքնությունը» ներկայաց-

¹² **Lavenex S., Schimmelfenning F.**, EU Rules beyond EU borders: Theorizing External Governance in European Politics, *Journal of European Public Policy*, 2009, **16**, 6, 791-812.

¹³ **Sil R., Katzenstein P.**, Analytical Eclecticism in the Study of World Politics: Reconfiguring Problems and Mechanisms across Research Traditions, *Perspectives on Politics*, 2010, **8**, 2, 411-431.

¹⁴ **Bache I., Bulmer S. and Gunay D.**, Metatheory and Europeanization research: let's get critical!, p. 13, <https://ecpr.eu/Filestore/PaperProposal/8473aa39-998d-4d04-a792-033c237f69c7.pdf> (20.01.2017).

վում է որպես չորս փոխկապակցված իմաստներ ունեցող բարդ երևույթ¹⁵: Դրանք են

- 1) *Սահմանադրության ինքնություն*՝ սահմանադրության մեջ ամրագրված հիմնարար սկզբունքներն ու արժեքները, որոնք կազմում են դրա առանցքը և սահմանում են դրա բնույթն ու առանձնահատկությունները:
- 2) Երկխոսության ճանապարհով ձևավորված *ժողովրդի կամ երևակայական քաղաքական հանրության ինքնություն*:
- 3) *Իրական քաղաքական հանրության սահմանադրական ինքնություն*, որը բնութագրվում է սահմանադրական տեքստի, ժողովրդի

¹⁵ «Սահմանադրական ինքնության»՝ որպես բարդ, բազմաշերտ հասկացության դիտարկումը նոր չէ: Լեհաստանի սահմանադրական ինքնության առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրության մեջ Ա. Սլեզիևսկա-Միտնն առաջարկում է «սահմանադրական ինքնության» եռաչափ մոդել, որն ըստ հեղինակի համարժեք է ազգ-պետությանը (*Śledzińska-Simon A.*, նշվ. աշխ., էջ 138): Այդ մոդելը կառուցված է անհատի եռակողմ ինքնագիտակցության վրա, որն արտահայտում է վերջինիս ինքնորոշման և ինքնաարտահայտման ձգտումը 1) իր եզակիության տեսանկյունից (ներանձնային, անհատական մակարդակ), 2) այլ անձանց հետ իր փոխհարաբերությունների տեսանկյունից (միջանձնային մակարդակ), 3) խմբային անդամակցության տեսանկյունից (խմբային, կոլեկտիվ մակարդակ) (և ույն տեղում, էջ 137): Համապատասխանաբար, հեղինակը տարբերակում է ինքնության անհատական, միջանձնային և կոլեկտիվ չափումներ: «Սահմանադրական ինքնությունը»՝ դիտարկելով որպես «իրավունքների հստակ ռեժիմ»՝ հեղինակը տարբերակում է 1) անհատական ինքնություն (Անհատի սահմանադրական ինքնագիտակցությունը, որը կարող է համրնկնել ազգային ինքնության հետ: Ըստ հեղինակի, միայն այս չափումն է արտահայտում ավանդական մշակույթի և ազգի վրա հիմնված ինքնության տեսակը), 2) սահմանադրական ինքնության անձնային չափում, որը բնութագրում է անհատի սահմանադրական ինքնագիտակցության և այլ՝ արտաքին ինքնությունների (ազգ-պետություններ, միջկառավարական կազմակերպություններ և այլն), միջև հարաբերությունները, 3) կոլեկտիվ չափում, որը վերաբերում է մի կողմից անդամ պետությունների միջև հարաբերություններին, մյուս կողմից ԵՄ-ին որպես առանձին սահմանադրական միավորի (նույն տեղում, էջ 138-139): Ի տարբերություն այս մոտեցման՝ հողվածում ներկայացված սահմանադրական ինքնության քառաչափ վերլուծական մոդելի հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ կոնկրետ պետության կամ միության (օրինակ, ԵՄ) ներսում գոյություն ունեցող «սահմանադրական ինքնությունը» կազմված է առնվազն չորս փոխկապակցված ինքնություններից, որոնց կրողներն են սահմանադրությունը, ժողովուրդը կամ երևակայական քաղաքական հանրությունը, իրական քաղաքական հանրությունը և սահմանադրական կարգը:

ինքնության և հասարակության սահմանադրական պրակտիկայի միջև ներդաշնակության մակարդակով: Դա ցույց է տալիս, թե արդյոք հասարակությունը քաղաքական հանրություն է, որն իրեն նույնականացնում է հռչակված սահմանադրական սկզբունքների հետ, թե այն գործում է անկախ՝ սեփական արժեքների ու պրակտիկայի զուգահեռ աշխարհում:

- 4) Սահմանադրական կարգի ինքնություն, որը սահմանում է դրա հարաբերություններն այլ իրավակարգերի հետ (միջազգային, վերազգային, ենթաազգային) և արտաքին ազդեցությունների նկատմամբ դրա բացությունը (օրինակ, օրենսդրության ներդաշնակեցման գործընթացների, գլոբալ դերակատարների նորմատիվային իշխանության ազդեցությունների նկատմամբ բացություն, «լավագույն փորձին» հետևելու ճանապարհով իրավական փոխառումների նկատմամբ հետաքրքրություն և այլն):

«Սահմանադրական ինքնությունը» միջգիտակարգային հասկացություն է: Այն ներառում է օրենսդրական դրույթները և իրական սահմանադրական պրակտիկան, ինչպես նաև արտաիրավական այն գործոնները, որոնք ազդում են սահմանադրական իրողությունների վրա:

Հոդվածում նախ բնորոշվում է «սահմանադրական ինքնություն» հասկացությունը, այնուհետև փորձ է արվում այդ տեսական մոդելն ինտեգրել Շիմմեֆենինգի, Սեդելմեյերի և Լավենեքսի մշակած «էվրոպականացման» անալիտիկ մոդելում: Վերջինս հիմնված է երրորդ երկրի իրավական համակարգ էվրոպական նորմերի ներմուծման երեք հիմնական մեխանիզմների համադրության վրա: Դրանք են արտաքին խթանները, սոցիալական ուսուցումը և քաղած դասերը (*lessons drawing*)¹⁶: Այդ համադրությունը հնարավորություն կտա վերհանել ազգային սահմանադրական ինքնության այն տարրերը

¹⁶ **Lavenex S., Schimmelfenning F.**, EU Rules Beyond EU borders: Theorizing External Governance in European Politics, *Journal of European Public Policy*, 2009, **16**, 6, 791-812; **Schimmelfenning F., Sedelmeier U.**, Governance by Conditionality: EU Rule Transfer to the Candidate Countries of Central and Eastern Europe, *Journal of European Public Policy*, 2004, **11**, 4, 661-679; **Schimmelfenning F., Sedelmeier U.**, Candidate Countries and Conditionality, *Graziano P., Vink M.P. (eds), Europeanization. New Research Agendas*, Palgrave Macmillan UK, pp. 88-101.

(չափումները), որոնք կարող են մեծացնել կամ նվազեցնել եվրոպականացման գործընթացի արդյունավետությունը:

Հողվածում նախնական եզրակացություն է արվում, որ կան ազգային սահմանադրական ինքնության որոշ առանձնահատկություններ, որոնք կարող են ազդել եվրոպականացման արդյունավետության վրա (եվրոպական արժեքների տարածում, իրավամտաճողության և սահմանադրական մշակույթի վրա խորհրդային ժառանգության ազդեցություն, արտաքին ազդեցությունների, միջազգային չափանիշների և «լավագույն փորձի» նկատմամբ բացություն և եվրոպականացման գործընթացները գործիքայնացնելու միտում): Հետաքրքրական է, որ այս առանձնահատկություններն առաջին հայացքից միմյանց հակասում են, ինչը կարող է պայմանավորված լինել դրանց պատկանելությամբ սահմանադրական ինքնության տարբեր չափումներին և այդ չափումներից յուրաքանչյուրի ներսում անցումային շրջանի փոփոխությունների դինամիկայով:

Սահմանադրական ինքնությունը՝ որպես սահմանադրության ինքնություն

Ինչպես արդեն նշվել է, «սահմանադրական ինքնության» միասնական ընկալում դեռևս չկա: Վերլուծելով գիտական սահմանումների բազմազանությունը՝ Ջ. Լ. Մարտին առաջարկում է առանձնացնել «սահմանադրական ինքնության» երկու հնարավոր իմաստներ. 1) «սահմանադրության ինքնություն» և 2) «այդ սահմանադրությամբ առաջնորդվող ժողովրդի կամ քաղաքական հանրության ինքնություն»¹⁷: Առաջին իմաստով սահմանադրական ինքնությունն այն է, ինչը որևէ սահմանադրություն դարձնում է տվյալ Սահմանադրությունը: Այլ կերպ ասած, դա սահմանադրության հիմնարար, էական կամ որոշիչ առանցքն է¹⁸: Վերջինս, իր հերթին, սահմանափակված չէ սահմանադրական տեքստով, այլ ներառում է այն հիմնարար արժեքները, սկզբունքներն ու կանոնները, որոնք կարող են

¹⁷ **Marti J. L.**, Two Different Ideas of Constitutional Identity: Identity of the Constitution v. Identity of the People, *Saiz Arnaiz A., Alcobarro Llivina C (eds.), National Constitutional Identity and European Integration*, Intersentia, 2013, p. 19.

¹⁸ **Marti J. L.**, նշվ. աշխ., էջ 22:

սահմանվել սահմանադրության մեկնաբանության միջոցով՝ հիմնված ոչ միայն իրավական, այլև քաղաքական ու բարոյական փաստարկների վրա: Տեքստում այդ «առանցքը» կարող է արտահայտվել սահմանադրության անփոփոխելի դրույթների կամ այն դրույթների տեսքով, որոնք ավելի բարդ է փոփոխել՝ ի տարբերություն այլ դրույթների (թեև շատ հաճախ դա վճռորոշ փաստարկ չէ¹⁹): Ըստ էության, այդ նորմերում արձանագրված փոփոխությունները շատ ավելի կարևոր են, քան «կանոնավոր» սահմանադրական փոփոխությունները, քանզի դրանք արտահայտում են հեղափոխական նշանակություն ունեցող տեղաշարժերը²⁰:

«Սահմանադրական ինքնությունը» որպես սահմանադրության էություն, որն արտացոլվում է դրա անփոփոխ առանցքում, ներկայացվել է դեռևս Կառլ Շմիդտի «Սահմանադրական տեսություն» (1928թ.) աշխատության մեջ: Վերլուծելով սահմանադրական փոփոխություններ իրականացնելու լիազորության սահմանները՝ նա նշում է, որ սահմանադրական դրույթները կարող են փոփոխվել միայն այն նախապայմանով, որ *սահմանադրության ինքնությունը* և *շարունակականությունը*՝ որպես մեկ ամբողջականություն, պահպանվեն: Դա նշանակում է, որ սահմանադրական փոփոխություններ իրականացնելու լիազորությունը տարածվում է միայն այն սահմանադրական դրույթների վրա, որոնք պահպանում են սահմանադրությունը²¹:

¹⁹ Այդ առումով հատկանշական է Լատվիայի օրինակը, որտեղ սահմանադրության տեքստում (*Satversme*) ամրագրված է, որ սահմանադրական կարգի հիմունքներն ամրագրող դրույթները ենթակա են փոփոխության: Այդուհանդերձ, Սահմանադրական իրավունքի հանձնաժողովը եզրակացրել է, որ գոյություն ունի սահմանադրության տեքստի չգրված միջուկ, որը սահմանում է Լատվիայի սահմանադրական ինքնությունը, այլ կերպ ասած՝ պետական օրենսդրության մեջ պետության ինքնությունը և պետական կարգի ինքնությունը: Ըստ էության, սահմանադրության «առանցք» առձեռնմխելի է: Սահմանադիրն իրավունք ունի փոփոխել սահմանադրության տեքստը՝ սահմանված ընթացակարգով, և այնպես, որ այդ փոփոխությունները չհակասեն սահմանադրական տեքստի «առանցքին»: Իր եզրակացությունների հիման վրա Հանձնաժողովն առաջարկում էր սահմանադրության տեքստում ներմուծել «հավերժական (անփոփոխ) դրույթի» գաղափարը: (**Rodiņa A., Pleps J.**, *Constitutionalism in Latvia: Reality and Developments, New Millennium Constitutionalism: Paradigms of Reality and Challenges*, Yerevan, Njhar, 2013, p. 443).

²⁰ **Marti J. L.**, նշվ. աշխ., էջ 24.

²¹ **Schmitt C.**, *Constitutional Theory*, Duke University Press, 2008, p. 150.

«Սահմանադրական ինքնությունը» դիտարկելով որպես «սահմանադրության ինքնություն», որն արտահայտվում է դրա հիմքում ընկած արժեքներում, սկզբունքներում և կանոններում՝ Ջ. Մարտին եզրակացնում է, որ քանի որ եվրոպական երկրների սահմանադրությունների զգալի մասի «առանցքը» գրեթե նույնական է, այդ երկրների սահմանադրական ինքնությունները ևս պետք է նույնական լինեն²²: Մի կողմից այս հաստատագրումը ճշմարիտ է թվում, քանզի եվրոպական երկրներն ունեն մինևույն առանցքային սահմանադրական արժեքներն ու սկզբունքները, ինչի արդյունքում ձևավորվում են ԵՄ անդամ երկրների, այսպես կոչված, «ընդհանուր սահմանադրական ավանդույթներ»: Մյուս կողմից, դա կարող է նշանակել, որ «սահմանադրական ինքնությունը» սահմանափակված չէ հիմնարար արժեքներով ու սկզբունքներով: Փ. Ֆարագունան «սահմանադրական ինքնությունը» դիտարկում է այն դրույթների պրիզմայով, որոնք ենթակա չեն փոփոխության՝ սահմանադրական բարեփոխումների կամ սահմանադրության մեկնաբանության փոփոխությունների միջոցով: Այս մոտեցման շրջանակներում սահմանադրությունը բնորոշվում է որպես «հավերժական կամ անփոփոխ» (սահմանադրական ինքնություն՝ անկախ տարբերություններից) և մոտ է Մարտիի առաջարկած սահմանմանը: Մյուս կողմից, հեղինակը «սահմանադրական ինքնությունը» գնահատում է այն առանձնահատուկ դրույթների պրիզմայով, որոնք տվյալ Սահմանադրությունը տարբերում են այլ սահմանադրություններից (սահմանադրական ինքնությունը՝ որպես տարբերություն)²³:

Եթե այս մոտեցման շրջանակներում դիտարկվի ՀՀ Սահմանադրության դեպքը, ապա կարելի է եզրակացնել, որ «սահմանադրական ինքնությունն՝ անկախ տարբերություններից» գաղափարն ամրագրված է Սահմանադրության հոդված 1-ի²⁴, հոդված 2-ի²⁵ և

²² **Marti, J. L.**, նշվ. աշխ., էջ 30.

²³ **Faraguna P.**, Constitutional Identity — A Shield or a Sword? The Dilemma of Constitutional Identities in the EU (June 30, 2017), <https://ssrn.com/abstract=2995416> (15.02.2017).

²⁴ **Հոդված 1.** Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

հոդված 3-ի²⁶ անփոփոխ դրույթներում և դրանց առնչվող այն դրույթներում, որոնցում սահմանվում են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի առանձնահատկությունները և մարդու իրավունքների միջազգային չափանիշների նկատմամբ բացությունը: «Սահմանադրական ինքնությունը՝ որպես տարբերություն» արտացոլված է Սահմանադրության նախաբանում²⁷, հոդված 18-ում²⁸ և հոդված 19-ում²⁹: Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրության անփոփոխ

²⁵ **Հոդված 2.** Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

²⁶ **Հոդված 3.** Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները

Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

1. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

2. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

²⁷ Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

²⁸ **Հոդված 18.** Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին

1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:

²⁹ **Հոդված 19.** Հայկական սփյուռքի հետ կապերը

«առանցքում» ամրագրված է այն արժեքային համակարգը (օրենքի գերակայություն, ժողովրդավարություն, մարդու արժանապատվության և հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանք), որը ՀՀ-ն «կիսում է» ԵՄ-ի հետ³⁰:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ի տարբերություն այլ հետխորհրդային և հետսոցիալիստական երկրների սահմանադրական արդարադատության մարմինների (Լիտվա, Լատվիա, Մոլդովա, Լեհաստան, Չեխիա)՝ ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներում չի օգտագործում «սահմանադրական ինքնություն» հասկացությունը: Միաժամանակ, դատարանն անդրադառնում է այնպիսի փոխկապակցված հասկացությունների, ինչպիսիք են Սահմանադրության «ոգին»³¹ և «Սահմանադրության արժեքանությունը»³², որը ներառում է սահմանադրական կարգի հիմքում ընկած

1. Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը:
2. Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրություն՝ 2005թ. և 2015թ.

սահմանադրական փոփոխություններով,

<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5805&lang=arm&enc=utf8> (30.06.2017).

³⁰ Մի կողմից՝ Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի և Եվրոպական միության, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև ՀՀԳՀ-ի նախաբան; Մի կողմից՝ Եվրոպական միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև ՀՀԳՀ-ի ստորագրման Խորհրդի որոշման վերաբերյալ համատեղ առաջարկի հավելված, (JOIN (2017) 37 final of 25.09.2017): Ըստ ՀՀԳՀ-ի նախագծի հոդված 2-ի, այդ արժեքների նկատմամբ հարգանքը Համաձայնագրի հիմնական սկզբունքներից է և կազմում է դրա «կարևորագույն տարրը»:

³¹ Սահմանադրական դատարանի 2002թ. փետրվարի 22-ի որոշումը (ՄԴՈ-350)՝ ՀՀ Սահմանադրության՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիային համապատասխանության հարցի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/decisions/common/2002/sdv-350.htm> (15.10.2017)

³² Սահմանադրական դատարանի 2014թ. նոյեմբերի 14-ի որոշումը (ՄԴՈ-1175)՝

2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության «Եվրասիական Տնտեսական Միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված

արժեքներն ու հիմնարար սկզբունքները, որոնք պարտադիր չէ, որ ամրագրված լինեն սահմանադրության տեքստում: Վերջինս կարելի է համարել որպես «սահմանադրության ինքնություն» հասկացությանը համարժեք հասկացություն:

Ժողովրդի (կամ երևակայական քաղաքական հանրության) սահմանադրական ինքնությունը

Մարտիի դասակարգման մեջ «սահմանադրության ինքնության» երկրորդ ընկալումը ժողովրդի կամ քաղաքական հանրության սահմանադրական ինքնությունն է: Հեղինակն առաջարկում է տարբերակել սահմանադրական ինքնության այդ չափման առնվազն երեք մոտեցում. 1) ազգային ինքնություն, որն արտացոլված է սահմանադրության մեջ, 2) ժողովրդի ինքնություն, որը հաստատված է սահմանադրությամբ (սահմանադրական սուբյեկտ) և 3) ժողովրդի ինքնություն. ժողովրդի՝ որպես հեղինակի (սահմանադիր իշխանություն) և որպես սահմանադրության սուբյեկտի³³:

Չնայած իմաստային տարբեր շեշտադրումներին՝ բոլոր երեք մոտեցումները ցույց են տալիս, որ երկու հասկացությունները՝ սահմանադրության ինքնությունը և քաղաքական հանրության ինքնությունը, ոչ միայն սերտորեն փոխկապակցված են, այլև միևնույն բարդ հասկացության՝ «սահմանադրության ինքնության», տարբեր չափումներ են : Վերջինս ոչ թե անփոփոխ օբյեկտ կամ իրավիճակ է, այլ սոցիալական հարաբերությունների դինամիկ համակարգ: Ռոզենֆելդը և Յակոբսոնը համարում են, որ սահմանադրական ինքնությունն ապահովում է առանցքային կապեր սահմանադրության, դրա միջավայրի, ստեղծողների և նրանց միջև, ում համար այն նախատեսված է³⁴: Ինչպես նշում է Փ. Հաբերլեն, սահմանադրությունը սուսկ իրավական տեքստ կամ կանոնների նորմատիվային շարք չէ, այն

պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ,
<http://concourt.am/english/decisions/common/pdf/1175.pdf> (15.10.2017):

³³ **Marti J. L.**, նշվ. աշխ., էջ 32-33:

³⁴ **Rosenfeld M.**, *Constitutional Identity*, *Rosenfeld M, András Sajó (eds.), The Oxford Handbook of Comparative Constitutional Law*, OUP, 2012, pp. 760-761.

նան մշակութային ժառանգության հայելի է և դրա ակնկալիքների հիմքը³⁵:

Յակոբսոնն ընդգծում է, որ սահմանադրությունը ձեռք է բերում ինքնություն փորձի միջոցով: Սահմանադրության ինքնությունը գոյություն չունի որպես հայտնագործության դիսկրետ օբյեկտ կամ հասարակության մեջ առկա խիստ կարծրացած երևույթ, որն ընդամենը անհրաժեշտ է բացահայտել³⁶: Ինքնությունը ստեղծվում է երկխոսության միջոցով և ներկայացնում է քաղաքական նկրտումների և պարտավորությունների համադրություն, որն արտացոլում է ազգի անցյալը, ինչպես նաև հասարակության այն անդամներին, որոնք որևէ կերպ փորձում են հաղթահարել այդ անցյալը: Այն ենթակա է փոփոխությունների, միաժամանակ դիմացկուն է սեփական կործանումը կանխելու համար և տարբեր իրավիճակներում կարող է ունենալ տարբեր դրսևորումներ³⁷:

Հարկ է նշել, որ «սահմանադրական ինքնության» այս մեկնաբանության շրջանակում «ժողովուրդը» իրական անհատներից և սոցիալական խմբերից կազմված փաստացի հանրությունը չէ: Ըստ Ռոզենֆելդի, դա զարգացող երևակայական համայնք է, որը չի համապատասխանում ժամանակի և տարածության մեջ հստակ տարանջատված անձանց որևէ խմբի³⁸, չնայած այն պետք է իր դրսևորումները և փոփոխություններն արտահայտի այն անձանց միջոցով, որոնք միավորված են ճշմարտանման, սակայն ոչ փաստացի խմբերում³⁹: Հեղինակը նաև ընդգծում է, որ «սահմանադրական ինքնությունը» սկիզբ է առնում որպես վակուում, որը պետք է լցվի երևակայության դինամիկ գործընթացի արդյունքում՝ համապատաս-

³⁵ **Häberle P.**, The Constitutional State and Its Reform Requirements, *Ratio Juris*, 2000, **13**, 1, pp. 77-79, cited in: *Roznai Y., Towards a Theory of Constitutional Unamendability, Jus Politicum* 18, Juillet 2017, Cours constitutionnelles et révisions de la Constitution, http://juspoliticum.com/uploads/jp18-t01_roznai.pdf (01.11.2017).

³⁶ **Jacobsohn G. J.**, Constitutional Identity, *The Review of Politics*, 2006, **68**, 361–397.

³⁷ **Jacobsohn G. J.**, նշվ. աշխ., էջ 361:

³⁸ **Rosenfeld M.**, The Constitutional Subject, Its Other, and the Perplexing Quest for an Identity of Its Own: A Reply to My Critics (March 13, 2012), *Cardozo Legal Studies Research Paper*, 358, p. 13, <https://ssrn.com/abstract=2021356> (15.09.2016).

³⁹ **Rosenfeld M.**, նշվ. աշխ., էջ 9:

խան տարրերի վերադասավորման և վերակառուցման միջոցով: Այն, թե ինչպես է լցվում սահմանադրական ինքնության այդ վակուումը, ոչ միայն փոփոխվում է ժամանակի ընթացքում, այլև տարատեսակ վեճերի և հակասությունների պատճառ է դառնում համապատասխան քաղաքականության շրջանակներում՝ իր իսկ հետագծի ուղղությամբ⁴⁰:

Կարելի է պնդել, որ հետխորհրդային անցումային շրջանում ազգային սահմանադրական ինքնության առավել ակտիվ «կառուցողներն» էին սահմանադրական դատարանները: Դ. Ռոբերտսոնը նշում է, որ ժամանակակից իրականության մեջ սահմանադրական դատարանի դատավորները հաճախ վերածվում են կիրառական քաղաքականության տեսաբանների՝ իրականացնելով հասարակությունների վերափոխման լիովին նոր քաղաքական գործառույթ՝ սահմանադրության մեջ ամրագրված արժեքները պետության և հասարակության շրջանում տարածելու ճանապարհով⁴¹: Ավելին, նրանք ոչ միայն տարածում, այլև սահմանում կամ ձևավորում են սահմանադրական արժեքների իմաստը: Արդյունքում, այսպես կոչված, “*acquis constitutionelle*”-ը՝ դատական որոշումների շարունակականությունը և սահմանադրական փորձի կուտակումը⁴², դառնում են ժողովրդի սահմանադրական ինքնության բաղկացուցիչ մաս: Դա, իր հերթին, կարող է ազդել *փաստացի* հասարակության կամ քաղաքական հանրության վրա: Դրա վառ օրինակ է Լեհաստանը, որտեղ, ըստ Սլեդզինսկա-Սիմոնի, Սահմանադրական դատարանի ակտիվությունն անցումային շրջանում առավել նպաստեց իրավագիտակցության, քան ժողովրդավարացման զարգացմանը՝ քաղաքականության իրականացման և օրենքների ընդունման վրա քաղաքացիական հասարակության և քաղաքացիների ազդեցության միջոցով⁴³:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ **Robertson D.**, *The Judge as Political Theorist: Contemporary Constitutional Review*, Princeton University Press, 2010, p. 1.

⁴² **Safjan M.**, *Political and Constitutional Courts. A Judge’s Personal perspective*, *EUI Working Paper Law*, 2008, 10, <http://cadmus.eui.eu/handle/1814/8101> (30.10.2017). Ըստ Մ. Սաֆյանի, “*acquis constitutionelle*” հասկացությունը առաջին անգամ կիրառել է Լեհաստանի Սահմանադրական դատարանը հարկերի վերացման և սեփականության պահանջների վերաբերյալ 2002թ. նոյեմբերի 20-ի իր որոշման մեջ (թիվ K 41/02) (**Safjan M.**, նշվ. աշխ., էջ. 20):

⁴³ **Sledzinska-Simon A.**, նույն տեղում:

«Երևակայական» քաղաքական հանրության սահմանադրական ինքնությունը կարող է ներառել պատմական ժառանգությունը և նույնիսկ կառուցված լինել դրա հիմքի վրա: Օրինակ, Հայաստանի դեպքում դրանք կարող են լինել 1918թ. մայիսի 28-ին ձևավորված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները⁴⁴ կամ ավելի վաղ ձևավորված սահմանադրական ավանդույթները, որոնք առնչվում են սահմանադրական արժեքների ժամանակակից հասկացությանը⁴⁵: Միաժամանակ, երևակայական քաղաքական հանրությունը կարող է ժխտել կամ «ձգտել գերազանցել» խորհրդային ժառանգությունն, օրինակ՝ վերանայելով պետության և անհատի միջև հարաբերությունների բնույթը կամ վերաիմաստավորելով իրավունքի նկատմամբ մոտեցումները (հեռացում մաքուր պոզիտիվիստական տեսությունից, սահմանադրական դրույթների մեկնաբանության նոր մոտեցումների որդեգրում և միջազգային իրավունքի ու միջազգային իրավական չափանիշների նկատմամբ բացություն): Պրակտիկայում այդ նոր մոտեցումների կիրառման ժամանակ առաջանում են նոր խնդիրներ: Օրինակ, խորհրդային ժառանգությունը, որից կարելի է հեշտությամբ գիտակացաբար հրաժարվել, այդուհանդերձ շարունակում է ազդել փաստացի (իրական) հասարակության իրավամտաճողության և սահմանադրական մշակույթի վրա՝ այդպիսով առաջացնելով անհամապատասխանություն ժողովրդի և փաստացի քաղաքական հանրության սահմանադրական ինքնությունների միջև:

Իրական հասարակության կամ քաղաքական հանրության սահմանադրական ինքնությունը

Իրական հասարակության կամ քաղաքական հանրության սահմանադրական ինքնության Յակոբսոնի տեսության կենտրոնական հասկացություններից մեկն է սահմանադրության մեջ ներկայացված գաղափարների և սոցիալական իրականության միջև *անհամապատ-*

⁴⁴1990թ. օգոստոսի 23-ի ՀՀ Անկախության հռչակագրի նախաբան:

⁴⁵ **Harutyunyan G.**, Constitutional Culture: The Lessons of History and the Challenges of Time, Revised English Edition, Yerevan, “Njar”, 2017.

տասխանությունը: Այս երևույթը հատուկ է անցումային շրջանում գտնվող հասարակություններին, օրինակ, հետխորհրդային տարածքի երկրներում: Ըստ Յակոբսոնի, սահմանադրական անհամապատասխանությունը ստեղծում է հարմարվողականության և կոնֆլիկտների ու դիտանանսի հաղթահարման անհրաժեշտություն: Ուստի, սահմանադրական ինքնությունը պետք է ձևավորվի երկխոսության միջոցով՝ այդ անհամապատասխանության հաղթահարման նպատակով⁴⁶:

Տարբեր սահմանադրությունների համեմատական վերլուծության հիման վրա Յակոբսոնն առանձնացնում է «պայքարող սահմանադրություններ» և «հարմարվող սահմանադրություններ»: Այս երկու տարաբևեռ մոդելները բնորոշում են սահմանադրության և սոցիալական իրականության միջև փոխհարաբերությունների երկու տարատեսակ⁴⁷: «Պայքարող սահմանադրությունները» ստեղծում են հիմքեր սոցիալական իրականության վերափոխման համար, մինչդեռ «հարմարվող սահմանադրությունները» ձգտում են պահպանել գոյություն ունեցող սոցիալական արժեքները⁴⁸: Ուստի, սահմանադրական գաղափարների և սոցիալական իրականության միջև անհամապատասխանությունն ավելի մեծ է առաջին դեպքում, ավելի փոքր՝ երկրորդ դեպքում: Այն, թե որ մոդելն է օգտագործվում և այն հարաբերակցությունը, որով համակցված են երկու մոդելների առանձնահատկությունները, կախված են սահմանադրության մշակման և ընդունման պահի սոցիալական համատեքստից:

Անցումային շրջանում գտնվող հասարակություններում (օրինակ, հետխորհրդային հասարակությունները) սահմանադրական ինքնությունը դեռևս զարգացման փուլում է: Այդպիսի զարգացող սահմանադրական ինքնություններին բնորոշ է պահպանման և վերափոխման միջև խիստ լարվածությունը⁴⁹:

Դասակարգելով նոր սահմանադրությունների ընդունմանը նպաստող իրավիճակները՝ Ռոզենֆելդն առանձնացնում է վեց տիպի

⁴⁶ **Rosenfeld M.**, *Constitutional Identity...*, էջ 761:

⁴⁷ **Jacobsohn G. J.**, *Constitutional Identity*, Harvard University Press, 2010, p. 213.

⁴⁸ **Jacobsohn G. J.**, նշվ. աշխ., էջ 214; **Rosenfeld M.**, *Constitutional Identity...*, էջ 761; **Klug H.**, *Constitutional Identity and Change*, *Tulsa Law Review*, 2013, **47**, 41-49.

⁴⁹ **Jacobsohn G. J.**, նշվ. աշխ., էջ 214.

սոցիալական համատեքստ⁵⁰: Ըստ հեղինակի, հետկոմունիստական Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում սահմանադրությունների ընդունումը կարող է մեկնաբանվել «համաձայնեցված անցումային մոդելի» (pacted transition model) միջոցով⁵¹: Դրա առանձնահատկություններն են⁵² 1) թուլացած նախկին ռեժիմի և ընդդիմության միջև բանակցությունները, որոնք հանգեցնում են նոր սահմանադրական կարգի ձևավորմանը, 2) օրինականության ընդհատման բացառումը, 3) ներքին և արտաքին գործոնների զգալի ազդեցությունը⁵³: Որոշ վերապահումներով⁵⁴ այդ մոդելը կարող է կիրառվել նաև մի քանի հետխորհրդային երկրների դեպքում: Այդ առանձնահատկություններից զատ, կարելի է առանձնացնել հետխորհրդային երկրներում սահմանադրությունների մշակման ևս մեկ առանձնահատկություն՝ անկախ պետություն ստեղծելու անհրաժեշտությունը: Ի հակադրություն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի՝ հետխորհրդային տարածքի երկրներում անցումային փուլն ուղեկցվում էր ոչ միայն վարչակարգի փոփոխություններով, այլև պետության կառուցման գործընթացներով: Կարելի է եզրակացնել, որ այդ սոցիալական համատեքստը ստեղծում է նպաստավոր միջավայր պահպանման և տրանսֆորմացիայի կոնֆլիկտային հարաբերությունների համար և մեծացնում է սոցիալական իրականության, նոր սահմանադրական տեքստի և ժողովրդի սահմանադրական ինքնության միջև տարբերությունը:

«Սահմանադրական ինքնության՝ որպես սահմանադրության և իրական քաղաքական հանրության միջև դինամիկ փոխհարաբերության, ընկալումը արդյունավետ միջգիտակարգային (սոցիալ-

⁵⁰ Դրանք են 1) հեղափոխության վրա հիմնված մոդել, 2) բրիտանական անտեսանելի մոդել, 3) պատերազմի վրա հիմնված մոդել, 4) համաձայնեցված անցումային մոդել, 5) անդրազգային մոդել, 6) միջազգային հիմունքներ ունեցող մոդել: (Rosenfeld M., Constitutional Identity..., էջ 766).

⁵¹ Rosenfeld M., The Identity of Constitutional Subject: Selfhood, Citizenship, Culture and Community, Routledge, 2009, pp. 197-198.

⁵² Ռոզենֆելդն այդ մոդելը ներկայացնում է 1978թ. Իսպանիայում սահմանադրության ստեղծման գործընթացի օրինակով, և այն կիրառում է 90-ական թթ. հետկոմունիստական Լեհաստանի ու Հունգարիայի ու Հարավային Աֆրիկայի սահմանադրական գործընթացների դեպքերի առնչությամբ:

⁵³ Rosenfeld M., The Identity of Constitutional Subject..., pp. 198-200.

⁵⁴ McFaul M., The Fourth Wave of Democracy and Dictatorship: Noncooperative Transitions in the Postcommunist World, *World Politics*, 2002, 54, 212-244.

իրավական) մոտեցում է, որը հնարավորություն է տալիս գնահատել, թե որքանով է հասարակությունը պաշտպանում և տարածում սահմանադրության տեքստում ամրագրված արժեքները: Հետխորհրդային տրանսֆորմացիայի համատեքստում այն օգնում է պարզել, թե որքանով է ժողովրդավարական արժեքներին անցումը, որը տեղի է ունենում ֆորմալ-իրավական հարթությունում՝ (սահմանադրության տեքստում և օրենսդրության մեջ) տարբեր գործոնների և դերակատարների ազդեցության ներքո, ներդաշնակ միևնույն արժեքներին անցմանը սոցիալական իրականության մեջ: Ակնհայտ է, որ իրավունքի գերակայությունը, ժողովրդավարությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ամրապնդելու համար բավարար չէ միայն սահմանադրության մեջ այդ արժեքները հռչակել որպես հիմնարար արժեքներ: Առավել կարևոր է դրանց լիարժեք գործարկումը պրակտիկայում⁵⁵: Համեմատելով ավելի քան հարյուր սահմանադրություններ՝ Գինգբուրգը և Վերստեգը նշում են, որ այն երկրները, որոնք իրենց սահմանադրությունների մեջ ակնհայտորեն պաշտպանում են այնպիսի արժեքներ, ինչպիսին է իրավունքի գերակայությունը, պրակտիկայում ունեն դրա նկատմամբ հարգանքի ավելի ցածր մակարդակ, քան նրանք, որոնք իրավունքի գերակայության երաշխիքները չեն ամրագրում սահմանադրության տեքստում⁵⁶:

Սահմանադրական արժեքների պատշաճ կիրառումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ արժեքներն ընդունվում են հասարակության կողմից⁵⁷ և չեն ընկալվում որպես դրսից պարտա-

⁵⁵ **Khvorostiankina A.**, Constitutional Reforms and Post-Soviet Transformation in Ukraine: Challenges on the Way to the Rule of Law, *Armenian Journal of Political Science*, 2015, 1, 101-116.

⁵⁶ **Ginsburg T., Versteeg M.**, Constitutional Correlates and the Rule of Law. *Adams M., Meuwese A. and Hirsch Ballin E. (eds.), Constitutionalism and the Rule of Law: Bridging Idealism and Realism*, Cambridge University Press, 2017, p. 507, 517.

⁵⁷ Ըստ Վորլենդերի, «Սահմանադրությունները կարող են կյանքի կոչել իրենց հիմնական գործառույթները՝ քաղաքական համայնքների և դրանց ինստիտուտների լեգիտիմացումն ու ինտեգրումը, եթե դրանց նորմատիվային կանոնները և առաջակվող իմաստներն ընդունվեն և կիրառվեն սոցիալական պրակտիկայում, եթե իշխանության և հասարակության միջև երկխոսություն ծավալվի հիմնարար արժեքների և վարքագծի օրինաչափությունների վերաբերյալ»: (**Vorländer H.**, Gründung und Geltung: Die Konstitution der Ordnung und die Legitimität der Konstitution, *Melville G., Vorländer H. (eds.)*,

դրված արժեքներ: Դա նշանակում է, որ իրական քաղաքական հանրության սահմանադրական ինքնությունը սերտորեն փոխկապակցված է սահմանադրական մշակույթի⁵⁸ կամ ավելի լայն՝ քաղաքական-իրավական մշակույթի հետ⁵⁹: Այդ երկուսը փոխհարաբերվում են մասնակիորեն (սահմանադրական ինքնություն) և ամբողջական (սահմանադրական մշակույթ): Շեյգալը նշում է, որ սահմանադրական մշակույթը սև արկղ է, որի միջոցով սահմանադրության տեքստը վերափոխվում է կոնկրետ գործողությունների: Դա պրակտիկայի, ինստիտուցիոնալ մեխանիզմների, նորմերի և մտածելակերպի փոխկապակցված համակարգ է, որը սահմանում է ինչ հարցադրումներ են արվում, ինչ փաստարկներ են առաջ քաշվում և ինչպես են լուծվում վեճերը⁶⁰:

Geltungsgeschichten: Über die Stabilisierung und Legitimierung institutioneller Ordnungen, Cologne/Weimar/Vienna: Böhlau, 2002, p. 256 as cited in: *Hensel S., Bock U., Dircksen K., and Thamer H. (eds.), Constitutional Cultures: On the Concept and Representation of Constitutions in the Atlantic World*, Cambridge Scholars Publishing, 2012, p. 5).

⁵⁸ Մացցոնեն նշում է, որ սահմանադրական մշակույթը ենթադրում է 1) մի իրավիճակ, երբ շարքային քաղաքացին ճանաչում և ընդունում է, որ առաջնորդվում է սահմանադրությամբ, որը ստեղծում է կառավարման ինստիտուտներ և սահմանափակում է կառավարության գործողությունները; 2) ընդունված համոզմունք, որ սահմանադրությունը ստեղծվում է քաղաքացիների կողմից; (3) Սահմանադրությունն անժամկետ չէ, քաղաքացիները կարող են այն փոփոխել կամ չեղարկել որոշ հանգամանքներում; 3) իրավագիտակցություն, որ քանի դեռ սահմանադրությունը չի փոխվել, քաղաքացիները պարտավոր են դրանով առաջնորդվել: Սահմանադրական մշակույթը ներառում է նաև այն համոզմունքը, որ սահմանադրությունը միավորում է բնակչությանը: Դա այն ընդհանուրն է, ինչ մարդիկ ունեն՝ անկախ իրենց տարբերություններից: (**Mazzone J.**, *The Creation of a Constitutional Culture*, *Tulsa Law Review*, 2004, **40**, 4, Art. 7, p. 672). Կարելի է պնդել, որ վերջին տարրը՝ սահմանադրական արժեքների տեղայնացմանը զուգահեռ, կազմում է իրական քաղաքական հանրության սահմանադրական ինքնությունը:

⁵⁹ «Իրավունք և հասարակություն. Ներածություն» աշխատանքում Ֆրիդմանը նշում է, որ իրավական մշակույթը սահմանում է, թե ժողովուրդը երբ, ինչու և որտեղ է օգտագործում իրավունքը, իրավական ինստիտուտները կամ իրավական գործընթացները: (**Cotterrell R.**, *Law, Culture and Society: Legal Ideas in the Mirror of Social Theory*, Ashgate, 2006, p. 86)

⁶⁰ **Siegel A. M.**, *Constitutional Theory, Constitutional Culture*, *Journal of Constitutional Law*, 2016, **18**, 4, p. 1107.

Անկախ վերջին տասնամյակների հայաստանյան զարգացումներից՝ Սահմանադրության մեջ ամրագրված արժեքների և սկզբունքների, դրանց գործնական կիրառության և հասարակության կողմից ընկալման միջև անհամապատասխանությունը շարունակում է մնալ կարևոր խնդիր: Ըստ Փայասլյանի, Հայաստանի քաղաքական մշակույթի վրա խորապես ազդում է խորհրդային ավտորիտար փորձը: Դրա հիմնարար վերափոխումն ու ժողովրդավարական նորմերի մշակումը մոտ ապագայում քիչ հավանական են, մասնավորապես՝ սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակի պատճառով⁶¹: Նա նշում է, որ մարդիկ, ովքեր ապրում են սոցիալ-տնտեսական անբավարար պայմաններում, չեն կարող նշել այն նպատակները, որոնք հակասում են առօրյա կյանքի հրամայականներին: Այդ պայմաններում մարդու իրավունքների ոլորտի արժեքները սերտորեն կապված են ոչ թե քաղաքական և քաղաքացիական ազատություններին առնչվող հարցերի, այլ հրատապ տնտեսական խնդիրների հետ⁶²:

Հաշվի առնելով սոցիալական իրողությունները՝ Հայաստանում ընթացող ժողովրդավարական տրանսֆորմացիայի գործընթացները պահանջում են տնտեսական և քաղաքական մենաշնորհային կառույցների լուծարում և պետության, անհատների ու քաղաքացիական հասարակության միջև հարաբերությունների վերաձևակերպում⁶³: Այդ տեսանկյունից Փայասլյանը հույսեր է կապում հետխորհրդային սերնդի և նրանց հետ եկած քաղաքական մշակույթի հետ: Մույն հետազոտության նախնական արդյունքները ցույց են տալիս, որ այդ հույսերն անհիմն չեն: Այսօր, հայ երիտասարդներն ավելի հաճախ են սահմանադրության հիմքում ընկած արժեքները ընկալում որպես սահմանադրական մշակույթի մաս և կարևորում այդ արժեքների

⁶¹ Payaslian S., *The Political Economy of Human Rights in Armenia: Authoritarianism and Democracy in a Former Soviet Republic*, I.B. Tauris, 2011, pp. 290-293.

⁶² Payaslian S., նշվ. աշխ., էջ 291:

⁶³ Նույն տեղում:

տարածումը (թեև թերահավատ դիրքորոշումները ևս զգալիորեն ուժեղ են)⁶⁴:

Սահմանադրական ինքնությունը՝ որպես սահմանադրական կարգի ինքնություն

«Սահմանադրական ինքնություն» հասկացությունը կարող է դիտարկվել նաև չորրորդ հնարավոր իմաստի պրիզմայով՝ որպես պետական սահմանադրական կարգի ինքնություն՝ այլ իրավակարգերի հետ փոխհարաբերություններում: Այսօր պետական սահմանադրական կարգերը չեն կարող գոյության ունենալ մեկուսացման մեջ: Դրանք երկխոսության մեջ են միջազգային, վերազգային, անդրազգային և արտաքին իրավակարգերի հետ⁶⁵: Այդ երկխոսությունը հանգեցնում է երկկողմ (թեև սովորաբար անհամաչափ) փոխակերպող ազդեցության: Այդ դեպքում սահմանադրական ինքնությունն օգնում է նախանշել հնարավոր ազդեցության սահմանները: Այն ցույց է տալիս սահմանադրական կարգի բացության աստիճանն այլ իրավակարգերի նկատմամբ և դրա համապատասխանությունը միջազգային չափանիշներին ու պահանջներին⁶⁶:

Սահմանադրական ինքնության այս ընկալումը մշակվել և ակտիվորեն կիրառվել է եվրոպական սահմանադրական դատարանների նախադեպային իրավունքում՝ ներպետական և ԵՄ իրավական համակարգերի փոխհարաբերություններին վերաբերող գործերի

⁶⁴ Այդ հաստատագրումը հիմնված է 2013-2017թթ. Բրյուսելի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ուսանողների հետ անցկացված ֆոկլուս խմբային քննարկումների արդյունքների վրա:

⁶⁵ Անդրադառնալով իրավական բազմակարծության ժամանակակից հասկացությանը և իրավակարգերի փոխհարաբերություններին՝ Արմին ֆոն Բոգդանդին նշում է, որ որևէ սահմանադրություն այլևս չի ստեղծում համընդհանուր նորմատիվային կարգ, այլ ինքն է հանդիսանում նորմատիվային բազմակարծության տարր: (**Von Bogdandy A.**, Pluralism, direct effect, and the ultimate say: On the relationship between international and domestic constitutional law, *International Journal of Constitutional Law* (I*CON), 2008, **6**, 3-4, 397-413).

⁶⁶ Հետազոտության այս փուլում կարելի է առաջ քաշել այն կանխավարկածը, որ որքան ավելի ցածր է սահմանադրական ինքնության կայացածության մակարդակը, այնքան ավելի ցածր է արտաքին ազդեցությունների նկատմամբ սահմանադրական կարգի դիմադրությունը:

առնչությամբ: ԵՄ-ի համատեքստում ազգային սահմանադրական ինքնությունը դիտարկվում է որպես ԵՄ անդամ երկրների իրավական համակարգերի «եվրոպականացումը» (կամ եվրոպական սահմանադրական ինքնությունը, այլ կերպ ասած՝ ԵՄ-ի սահմանադրական ինքնությունը) սահմանափակող գործոն և կապված է պետության ինքնիշխանության հայեցակարգի հետ⁶⁷: Ակադեմիական գրականության մեջ եվրոպական սահմանադրական դատարանների կողմից «սահմանադրական ինքնության» փաստարկի կիրառման երկու հիմնական մոտեցումները փոխաբերաբար բնորոշվում են որպես «վահան» և «սուր»⁶⁸: Առաջին դեպքում «սահմանադրական ինքնությունն» օգտագործվում է պետական իրավական համակարգերը «հետագա և ապագա ինտեգրումից» պաշտպանելու նպատակով, երկրորդ դեպքում՝ որպես «օպերատիվ դրույթ»՝ պետական սահմանադրական իրավունքի և ԵՄ իրավունքի միջև հակասությունները հարթելու համար⁶⁹: Վերլուծելով Լեհաստանի սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը՝ Սլեզինսկա-Սիմոնն ու Զիոլկովսկին ընդգծում են, որ Լեհաստանի դատարանը «սահմանադրական ինքնությունը» հասկանում է որպես ԵՄ իրավական նորմերի հետ արժեքանական համարժեքություն կամ մոտարկում կամ, ընդհակառակը, որպես հեռացում ընդհանուր սահմանադրական չափանիշներից⁷⁰:

ԵՄ օրենսդրության մեջ դատական փաստարկման իրավական հիմքերը, հիմնված «ազգային սահմանադրական ինքնության» վրա,

⁶⁷ Այդ իմաստով «ազգային սահմանադրական ինքնություն» եզրույթը կիրառվում է մասնավորապես սահմանադրական արդարադատության եվրոպական մարմինների կողմից (ուսումնասիրվել են Գերմանիայի, Հունգարիայի, Չեխիայի, Դանիայի դեպքերը): (**Faraguna P.**, նշվ. աշխ., նաև դեպքերի ուսումնասիրությունն ըստ **Saiz Arnaiz A., Alcobero Llivina C. (eds.)**, *National Constitutional Identity and European Integration*, Intersentia, 2013).

⁶⁸ **Faraguna P.**, *Op. cit.*; **Konstadinides Th.**, *Constitutional Identity as a Shield and as a Sword: The European Legal Order within the Framework of National Constitutional Settlement* (December 1, 2011), *Cambridge Yearbook of European Legal Studies*, 2010-2011, 13.

⁶⁹ **Faraguna P.**, նշվ. աշխ., էջ 1:

⁷⁰ **Sledzinska-Simon A., Ziolkowski M.**, *Constitutional Identity of Poland: Is the Emperor Putting on the Old Clothes of Sovereignty?* (July 5, 2017), <https://ssrn.com/abstract=2997407> (15.09.2017).

բխում են Եվրոպական Միության մասին պայմանագրից: Վերջինիս չորրորդ հոդվածի երկրորդ կետով նշվում է, որ Միությունը հարգում է բոլոր անդամ պետությունների հավասարությունը Պայմանագրի առջև, ինչպես նաև նրանց *ազգային ինքնությունը՝ որն ընկած է քաղաքական և սահմանադրական հիմնարար կառույցների* հիմքում, ներառյալ՝ տեղական և տարածքային ինքնակառավարումը: Միությունը պարտավորվում է հարգել նաև հիմնական պետական գործառույթները, այդ թվում՝ տարածքային ամբողջականության ապահովումը, օրենքի և կարգի պահպանումը և ազգային անվտանգության երաշխավորումը:

Եվրոպական ինտեգրման համատեքստում ազգային սահմանադրական ինքնության հարցի վերաբերյալ եվրոպական սահմանադրական դատարանների փաստարկային մոտեցումները բավական վիճահարույց են և ունեն հետագա ուսումնասիրությունների կարիք: Բացի այդ, դա կապված է կոնկրետ համատեքստի հետ՝ ԵՄ անդամակցության և ընդհանուր, փոխանցվող կամ սահմանափակ ինքնիշխանության հետ:

«Սահմանադրական ինքնության»՝ որպես «ազգային սահմանադրական կարգի ինքնության», իմ պատկերացումն ավելի լայն է և ներառում է տարատեսակ արտաքին ազդեցություններ: Դրանք կարող են լինել ֆորմալ և ոչ ֆորմալ և կարող են իրականացվել տարբեր խողովակների միջոցով՝ ազգային օրենսդրությամբ նախատեսված ֆորմալ իրավական գործիքների միջոցով⁷¹ և/կամ անուղղակիորեն՝

⁷¹ Օրինակ, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով սահմանվում է իրավական նորմերի աստիճանակարգությունը և նշվում է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Սահմանադրության 81-րդ հոդվածով սահմանվում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնված սահմանափակումները: 2007թ. ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածում ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը ճանաչվում է որպես իրավունքի պաշտոնական աղբյուր Հայաստանում: Սահմանադրության 43-րդ հոդվածով (1995թ. Սահմանադրություն) նշվում է, որ

իրավաստեղծ և իրավունքի իրացման գործունեության մեջ ներգրավված ներպետական դերակատարների սոցիալականացման միջոցով: Նույն կերպ, ազգային սահմանադրական կարգի՝ այլ իրավակարգերի հետ արդյունավետ փոխազդեցության խոչընդոտներ կարող են ստեղծվել ինչպես ուղղակիորեն՝ սահմանադրությամբ կամ օրենսդրությամբ, այնպես էլ անուղղակիորեն՝ ներպետական դերակատարների միջոցով (մասնավորապես, նրանց իրավամտաձողության վրա խորհրդային ժառանգության ուժեղ ազդեցության պայմաններում)⁷²:

Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները և ազատությունները սպառիչ չեն և չեն կարող մեկնաբանվել որպես մարդու և քաղաքացու այլ հանրաձանաչ իրավունքների և ազատությունների բացառում: Սահմանադրական դատարանի համար այդ սահմանադրական դրույթը ծառայում է որպես փաստարկման հիմք, որը հաստատում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից բխող պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը՝ փաստելով Հայաստանի սահմանադրական կարգի բացությունը մարդու իրավունքների միջազգային չափանիշների նկատմամբ (2002թ. փետրվարի 22-ի որոշման 13-րդ պարբերություն): Հայաստանի իրավական համակարգի վրա արտաքին ազդեցության մեկ այլ խողովակ է օրենսդրությունների մոտարկման գործընթացը, որը հիմնված էր ԵՄ-Հայաստան Գործընկերության և համագործակցության համաձայնագրի, ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագրի և համապատասխան ներպետական օրենսդրական շրջանակների վրա: (**Ghazaryan N., Hakobyan A.**, *Legislative Approximation and Application of EU Law in Armenia*, *Van Elsuwege P., Petrov R. (eds.), Legislative Approximation and Application of EU Law in the Eastern Neighbourhood of the European Union* Routledge, 2014, pp. 191-214). Այս ոլորտում սպասվող զարգացումներից է ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրի ուժի մեջ մտնելը: Համաձայնագրի նախագիծը պարունակում է ավելի ճշգրիտ մշակված մոտարկման դրույթներ՝ ի տարբերություն Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 43-րդ հոդվածով սահմանվող պարտադիր իրավական ձևակերպում չունեցող մոտարկման դրույթների:

⁷²Դրա օրինակ է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի կիրառման պրակտիկան ներպետական դատարանների կողմից: Չնայած, ինչպես արդեն նշվել է, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը ճանաչվել է որպես ներպետական իրավունքի պաշտոնական աղբյուր, դատավորները շարունակում են բախվել մեթոդաբանական խնդիրների դրա կիրառման ժամանակ՝ խորհրդային շրջանում իրավական պոզիտիվիզմի երկրարածամկետ գերակայության պատճառով: (**Ghazaryan, N., Hakobyan**, նշվ. աշխ., էջ 205): Այդուհանդերձ, այդ խնդիրներն առանձնահատուկ չեն: Դրանք այս կամ այն չափով բնորոշ են նաև հետխորհրդային այլ երկրների: (**Kühn Z.**, *The Application of European Law in the New Member States: Several (Early) Predictions*, *German Law Journal*, 2005, **6**, 3, 563- 582; **Meleshevych A., Khvorostyankina A.**, ‘Ukraine’, *L. Hammer and F. Emmert (eds), The European Convention on Human Rights and fundamental*

Վերլուծելով Արևելյան Եվրոպայի սահմանադրական պրակտիկայի վրա արտաքին ազդեցությունները՝ Ռոբերտսոնը նշում է, որ այդ երկրների արդարադատության առավել նշանակալի ասպեկտներից է այլ սահմանադրական դատարանների որոշումների և փաստարկների լայնամասշտաբ կիրառումը⁷³: Արտաքին իրավական աղբյուրների և նախադեպային իրավունքի կիրառումը ևս ՀՀ Սահմանադրական դատարանի պրակտիկայի զարգացման միտում է⁷⁴: Դատական գործերի զգալի մասի դեպքում սահմանադրական դատավարության գործընթացը ներառում է միջազգային և արտաքին իրավական նյութերի ուսումնասիրության փուլ, ինչն ազդում է դատարանի իրավական դիրքորոշումների ձևավորման վրա: Դա հաճախ չի արտացոլվում որոշումների վերջնական տեքստում, և դատարանը պարզապես հակիրճ ներկայացնում է, որ համապատասխան պրակտիկաներն ուսումնասիրվել են⁷⁵:

Արտաքին ազդեցությունների նկատմամբ սահմանադրական կարգի բացությունը՝ հատկապես միջազգային ինտեգրման նախագծերին մասնակցության առումով, կապված է սահմանադրական կարգի ինքնիշխանության հայեցակարգի հետ: ՀՀ Սահմանադրական դատարանը մի շարք դեպքերում անդրադարձել է ինտեգրման գործընթացի համատեքստում ինքնիշխանության խնդրին⁷⁶: Մարդու

freedoms in Central and Eastern Europe, The Hague, Eleven International Publishing, 2012, pp. 557-596).

⁷³ **Robertson D.**, նշվ. աշխ., էջ 96:

⁷⁴ Դրա օրինակ է ՀՀ Սահմանադրական դատարանի 2017թ. նոյեմբերի 10-ի որոշումը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 69-րդ հոդվածի 1-ին մասի, Վանաձոր համայնքի ավագանու 2017թ. մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: <http://concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1384.pdf> (14.11.2017).

⁷⁵ Այդ հաստատագրումը հիմնված է ՀՀ Սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական ծառայության պետ, դոկտոր Ս. Առաքելյանի հետ փորձագիտական հարցազրույցի վրա:

⁷⁶ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ ՀՀ

իրավունքների եվրոպական դատարանի իրավասության և Հայաստանի Հանրապետության դատական որոշումների վրա դրա պարտադիր ուժի վերաբերյալ հարցի առնչությամբ Դատարանը նշել է, որ «չնայած Սահմանադրությունն ուղղակիորեն չի նախատեսում իրավունքների պաշտպանության նպատակով միջազգային դատարան դիմելու իրավունքը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի լիազորող բնույթը և ՀՀ *ինքնիշխան իրավունքը՝ կամավոր և փոխադարձ համաձայնության հիման վրա, հանուն միջազգային համագործակցության արդյունավետության, ընդունել նման պարտավորություն, կարելի է արձանագրել, որ քննարկվող Կոնվենցիայի 36 և 43 հոդվածներով նախատեսված պարտավորությունները չեն հակասում ՀՀ Սահմանադրության ոգուն» (ՄԴ որոշման 14-րդ պարբերություն):*

2014թ. հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2014թ. նոյեմբերի 14-ի իր որոշման մեջ⁷⁷ Դատարանը գնահատում էր, ի թիվս այլ հարցերի, ՀՀ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների արժեքանական մոտեցումների համարժեքությունը ՀՀ սահմանադրական կարգի հիմքում ընկած սկզբունքներին, ինչպես նաև միջազգային համագործակցության ձևերի ու մեխանիզմների համապատասխանությունը մասնակից պետությունների ինքնիշխանության, իրավահավասարության և համագործակցության փոխշահավետության սկզբունքներին⁷⁸: Եվրասիական տնտեսական միությունը բնորոշելով որպես վերազգային կառույց՝

Սահմանադրական դատարանի 2002 թվականի փետրվարի 22-ի ՄԴՌ-350 որոշում: <http://concourt.am/english/decisions/common/doc/sdv-350e.htm>.

⁷⁷ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը 2014թ. հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «ՀՀ՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2014թ. նոյեմբերի 14-ի ՄԴՌ-1175 որոշում: <http://concourt.am/english/decisions/common/pdf/1175.pdf> (15.10.2017).

⁷⁸ Սահմանադրական դատարանի որոշում, 4-րդ պարբերություն:

Դատարանն օգտագործում է «մասնակցության կամավոր բնույթի» փաստարկը: Դատարանն ընդգծում է, որ այդ մասնակցությունը հիմնված է միջազգային պայմանագրի վրա, որը պետք է վավերացնի խորհրդարանը՝ հղում կատարելով ազգային մասնակցության կամքին՝ տվյալ պետության ազգային շահերից բխող մանդատով: Այդպիսով, Դատարանը չի հակասում ինքնիշխանության ժամանակակից ընկալմանը՝ որպես անսահմանափակ երևույթ, և տարածաշրջանային ու միջազգային ինտեգրման գործընթացները ճանաչում է որպես համատեղելի այդ սահմանադրական սկզբունքի հետ⁷⁹: Դատարանն ընդգծում էր, որ ՀՀ Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության հարցերում: Միաժամանակ, այն մատնանշում էր ՀՀ սահմանադրական կարգում հստակ սահմանադրական պահանջների առկայությունը: Ի հավելումն ինքնիշխանության, իրավահավասարության և միջազգային համագործակցության փոխշահավետության սկզբունքների, Դատարանը նշում էր, որ 1) մարդու իրավունքների վերաբերյալ սահմանափակումները (որոնք, ամենայն հավանականությամբ, բխում են վերազգային կազմակերպությանն անդամակցությունից) պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին և 2) վերազգային մարմինների որոշումների գործողությունը հնարավոր է միայն ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության դեպքում⁸⁰: ՀՀ սահմանադրական դատարանը նշում էր, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ որևէ վերազգային մարմնի ընդունած ցանկացած որոշում, որը չի համապատասխանում այդ պահանջներին, կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում: Իսկ այդ պահանջների բավարարման դեպքում Հայաստանի Հանրապետության համագործակցությունն այս կամ այն միջազգային կազմակերպության հետ սահմանադրականության խնդիր չի կարող առաջացնել⁸¹:

2017թ. ապրիլի 11-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրում

⁷⁹ Սահմանադրական դատարանի որոշում, 7-րդ պարբերություն:

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ Նույն տեղում:

ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի 2017 թ. հոկտեմբերի 10-ի որոշման մեջ (ՄԴՌ-1381)⁸² Սահմանադրական դատարանն առանձնացնում էր միջպետական և վերպետական բնույթի իրավական ակտերի միջև: Առաջին դասի ակտերը կարգավորում են միջազգային իրավահարաբերությունների սուբյեկտների միջև «հորիզոնական» հարաբերությունները, երկրորդ դասի ակտերը՝ պետության և պետության ներսում գործող սուբյեկտների միջև հարաբերությունները: Արդյունքում, վերպետական ակտերը դրանց կիրառման ժամանակ կարող են խախտել սահմանադրական իրավունքները: Սակայն, այդ խախտումների հավանականությունը չի կարող գնահատվել կանխարգելող և վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում: Այդ գնահատումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կա վերպետական ակտերի կիրառման պրակտիկա⁸³: Դա, իր հերթին, նշանակում է, որ նույնիսկ այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը կանխարգելող սահմանադրական վերահսկողության շրջանակներում համարում է, որ տվյալ վերպետական ակտը համապատասխանում է Սահմանադրությանը, դրա դրույթները կարող են *սպոստերիորի* վիճարկվել, եթե կա դրանց կիրառման պրակտիկա:

Կարելի է եզրակացնել, որ Հայաստանի սահմանադրական կարգը բաց է արտաքին ազդեցությունների նկատմամբ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ խողովակների միջոցով, պետական Սահմանադրության գերակայության ապահովման և դրա արժեքանությանը (արժեքային միջուկին կամ, այլ կերպ՝ դրա ինքնությանը) համապատասխանության պայմաններում: Քանի որ հայ սահմանադրական ինքնությունը գտնվում է զարգացման և խորհրդային անցյալի հաղթահարման գործընթացում, սահմանադրական կարգի բացությունն ունի անցումային շրջանին հատուկ որոշ առանձնահատկություններ: Մի կողմից՝ փորձ է արվում բավարարել միջազգային իրավունքի չափանիշները, հետևել աշխարհի «լավագույն պրակտիկաներին» և

⁸² <http://concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1381.pdf> (13.11.2017).

⁸³ Սահմանադրական դատարանի որոշում, 5-րդ պարբերություն:

փոխառել անհրաժեշտ փորձը, մյուս կողմից՝ այդ գործընթացներն ուղեկցվում են որոշ մեթոդաբանական խնդիրներով՝ պայմանավորված խորհրդային պոզիտիվիստական ավանդույթի արդյունքում ձևավորված իրավամտաճողության առանձնահատկություններով:

Սահմանադրական ինքնության ազդեցությունը հետխորհրդային տարածքում տարածաշրջանային ինտեգրման գործընթացների վրա

Արդյո՞ք սահմանադրական ինքնությունը վճռորոշ ազդեցություն ունի այս կամ այն ինտեգրման նախագծի ընտրության վրա: Մի կողմից ակնհայտ է, որ այդ ընտրության վրա ազդում են քաղաքական, աշխարհաքաղաքական, տնտեսական տարբեր գործոններ: Մյուս կողմից, որոշ դեպքերում աշխարհաքաղաքական կողմնորոշումը կարող է դառնալ սահմանադրական ինքնության տարր, որն ամրագրված է սահմանադրությամբ կամ սահմանադիր բնույթի փաստաթղթերով (օրինակ՝ անկախության հռչակագիրը) և ունի սահմանադրական արժեքի կարգավիճակ: Այդ համատեքստում կարելի է խոսել «սահմանադրական ինքնության» առաջին և երկրորդ չափումների փոխազդեցության մասին: Պատմական և մշակութային առանձնահատկությունների արդյունքում ժողովուրդը տվյալ աշխարհաքաղաքական կողմնորոշումը դիտարկում է որպես ցանկալի կամ միակ հնարավոր ուղի, իսկ սահմանադրության տեքստը արտացոլում կամ պաշտպանում է այդ առանձնահատուկ արժեքը:

Մոլդովայի Հանրապետության դեպքը դրա վառ օրինակ է: ԵՄ-Մոլդովա Ասոցացման համաձայնագրի սահմանադրականության վերաբերյալ 2014թ. հոկտեմբերի 9-ի իր որոշման մեջ Մոլդովայի Սահմանադրական դատարանը նշում էր, որ Մոլդովայի Հանրապետության անկախության հռչակագրի և Սահմանադրության առաջին հոդվածի համաձայն ժողովրդավարական արժեքների եվրոպական տարածքի ընտրությունը Մոլդովայի Հանրապետության *սահմանադրական ինքնության տարր է*⁸⁴: Այդ տարրն ունի որոշիչ

⁸⁴ Մի կողմից՝ Մոլդովայի Հանրապետության, մյուս կողմից՝ Եվրոպական միության և Ստոնային էներգիայի եվրոպական համայնքի և դրա անդամ պետությունների միջև Ասոցացման համաձայնագրի և 2014թ. հուլիսի 2-ին դրա վավերացման սահմանադրականության վերաբերյալ որոշում,

նշանակություն, ուստի եվրոպական ինտեգրման գործընթացը ոչ միայն համապատասխանում է երկրի սահմանադրական ինքնությանը, այլև ցանկացած այլ՝ դրան հակասող, կողմնորոշում *սպրիտրի* հակասահմանադրական է⁸⁵:

Մեկ այլ օրինակ է Լիտվան: «Լիտվայի Հանրապետության՝ հետխորհրդային Արևելյան դաշինքներին չմիանալու վերաբերյալ» 1992թ. հունիսի 8-ի Սահմանադրական ակտը Սահմանադրության անքակտելի մաս է⁸⁶, որն արգելում է «ցանկացած միացում որևէ նոր քաղաքական, ռազմական, տնտեսական կամ այլ միավորումների կամ նախկին ԽՍՀՄ հիմքի վրա ձևավորված պետությունների միությունների»:⁸⁷ Ինչպես նշում էր Լիտվայի Սահմանադրական դատարանի նախագահ Դ. Ժալիմասը, աշխարհաքաղաքական կողմնորոշման այդ սկզբունքը, որը հիմնված է պատմական փորձի վրա, Լիտվայի սահմանադրական ինքնության առանձնահատկություններից է⁸⁸:

Թեև այլ հետխորհրդային պետությունների սահմանադրություններում ուղղակիորեն նշված չեն ինտեգրման հստակ ուղղություններ, այդուհանդերձ ամրագրված են այն հիմնարար արժեքները, որոնք, իրենց հերթին, իրական քաղաքական հանրության կողմից ձևավորված լինելու դեպքում, կարող են ազդել այդ ուղղության ընտրության վրա: Ինչպես նշում էր ՀՀ Սահմանադրական դատարանը, «Եվրասիական տնտեսական միության մասին» վերոնշյալ պայմանագրում ՀՀ Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության հարցե-

<http://www.constcourt.md/libview.php?l=en&idc=7&id=583&t=/Overview/Press-Service/News/The-Association-Agreement-between-the-Republic-of-Moldova-and-the-European-Union-constitutional> (01.11.2017).

⁸⁵ Նույն տեղում:

⁸⁶ Լիտվայի Հանրապետության Սահմանադրության 150-րդ հոդված, <https://e-seimas.lrs.lt/rs/legalact/TAD/TAIS.206072/> (30.06.2017):

⁸⁷ «Լիտվայի Հանրապետության՝ հետխորհրդային Արևելյան դաշինքներին չմիանալու վերաբերյալ» 1992թ. հունիսի 8-ի Սահմանադրական ակտ, <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.21154?jfwid=1clcwot6i3>

⁸⁸ **Žalimas D.**, Eternity Clauses: a Safeguard of Democratic Order and Constitutional Identity, Speech of the President of the Constitutional Court of Lithuania, p. 2, http://www.gjks.org/repository/docs/Speech_of_the_President_of_the_Constitutional_Court_of_Lithuania_Prof.Dr._Dainius_alimas.pdf (01.11.2017).

րում⁸⁹: Այն նաև չի սահմանում կոնկրետ ինտեգրման առաջնահերթություններ կամ նախապատվություններ: ՀՀ-ի՝ ԵՏՄ-ին անդամակցության հանգամանքների վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ դա ոչ թե արժեքների վրա հիմնված քաղաքակրթական ընտրություն էր, այլ մեծապես բխում էր պրագմատիկ տնտեսական շահերից և անվտանգության նկատառումներից⁹⁰: Չնայած ՀՀ Սահմանադրական դատարանն արժեքանական փորձաքննության արդյունքում չի արձանագրել հակասություններ Հայաստանի սահմանադրական կարգի և ԵՏՄ-ի մասին պայմանագրի հիմնարար արժեքների միջև, ԵՏՄ-ին անդամակցությունը քիչ հավանական է, որ կնպաստի այդ արժեքների ամրապնդմանը⁹¹: Ի հակադրություն դրան, ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի նախագիծը ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ընդհանուր արժեքների ամրապնդումն ու պատշաճ կիրառումը դիտարկում է որպես Համաձայնագրի կարևորագույն

⁸⁹ Ըստ 2015թ. սահմանադրական փոփոխությունների, միջազգային կազմակերպություններին անդամակցության վերաբերյալ հարցերը լուծվելու են հանրաքվեի միջոցով (Սահմանադրության 205-րդ հոդված):

⁹⁰ **Bendavid N., Laurence N.**, EU Stunned by Armenia U-Turn, *The Wall Street Journal*, 4 September 2013, <http://blogs.wsj.com/brussels/2013/09/04/eu-stunned-by-armenia-u-turn/> (30.10.2016).

⁹¹ Լինելով տնտեսական համագործակցության կազմակերպություն՝ ԵՏՄ-ն նպատակ չունի խթանել այնպիսի արժեքներ, ինչպիսիք են իրավունքի գերակայությունը, ժողովրդավարությունը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը: Փոխարենը, իր գործարկման սկզբունքների շարքում ԵՏՄ-ի մասին պայմանագրում առանձնացվում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքների, այդ թվում՝ անդամ պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքի և քաղաքական կարգի առանձնահատկությունների նկատմամբ հարգանքը (ԵՏՄ-ի մասին պայմանագրի 3-րդ հոդված): ԵՏՄ անդամ պետություններն իրենց սահմանադրություններում փաստացի ճանաչում են եվրոպական կամ համընդհանուր արժեքները (Բելառուսի Հանրապետության Սահմանադրության առաջին և երկրորդ հոդվածներ, Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդված, Ղրղզստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդված, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության առաջին և երկրորդ հոդվածներ): Այս արժեքների գործնական կիրառումը ծայրահեղ խնդրահարույց է: Բոլոր նշված պետություններն ունեն կայացած ավտորիտար կամ կիսավտորիտար վարչակարգեր, ազատ չեն կամ մասնակի ազատ են: <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2016>, (30.10.2017):

տարր⁹²: Ուստի, եթե ԵՏՄ-ի հետ համագործակցությունը կարելի է համարել արդարացված պրագմատիկ տեսակյունից, ԵՄ-ի հետ ընդլայնված համագործակցությունն ակնհայտորեն համապատասխանում է ՀՀ Սահմանադրության ինքնությանը: Ավելին, երկարաժամկետ հեռանկարում դա կլինի շահավետ հայ ժողովրդի սահմանադրական ինքնության հետագա զարգացման և իրական քաղաքական հանրության սահմանադրական ինքնության եվոլյուցիայի համար:

Երբեմն ինտեգրման միջավայրի ընտրությունը կարող է պայմանավորված լինել սահմանադրության և քաղաքական հանրության ինքնությամբ: Այդ դեպքում ազգային սահմանադրական կարգի համապատասխանությունն ինտեգրման նախագծի պահանջներին կախված է սահմանադրական ինքնության բոլոր չորս չափումներից: Եթե սահմանադրության ինքնությունը, ժողովրդի և իրական քաղաքական հանրության սահմանադրական ինքնությունը ազդում են համապատասխանեցման գործընթացների բովանդակության վրա, ապա սահմանադրական կարգի ինքնությունը և դրա բացությունն արտաքին ազդեցությունների նկատմամբ սահմանում են համապատասխանեցման մեխանիզմներն ու գործիքները:

Սահմանադրական ինքնությունը և եվրոպականացման գործընթացը

«Եվրոպականացում» հասկացությունը ներառում է մի շարք բարդ գործընթացներ և չի սահմանափակվում միայն ԵՄ նորմերի ներմուծմամբ ներպետական իրավական համակարգ: ԵՄ-ի կամ եվրոպական կառուցների ազդեցության տակ գտնվող այդ գործընթացներն ուղղված են ոչ միայն երկրի օրենսդրական համակարգի վերափոխմանը, այլև ազդում են քաղաքական մշակույթի, իրավամտաճողության և դատական փաստարկման, քաղաքացիական հասարակության կայացածության, ինչպես նաև պետության և անհատի միջև հարաբերությունների վերափմաստավորման վրա: Ըստ Ռադաեյլի, «եվրոպականացումը» ենթադրում է ֆորմալ և ոչ ֆորմալ կանոնների, ընթացակարգերի, ռազմավարության հարացույցների,

⁹² ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի նախագիծ, երկրորդ հոդված:

ձևերի, ընդհանուր արժեքների ու նորմերի ստեղծում, տարածում և ինստիտուցիոնալացում, որոնք նախևառաջ սահմանվում և կայանում են ԵՄ որոշումներում, ապա ներառվում ներպետական խոսույթի, ինքնության, քաղաքական և հասարակական ռազմավարությունների տրամաբանության մեջ⁹³:

Սահմանումն ի սկզբանե մշակվել է ԵՄ-ի և ԵՄ անդամ պետությունների միջև հարաբերությունների համատեքստում: Սակայն, դա կարելի է կիրառել նաև ԵՄ սահմաններից դուրս ազդեցությունները նկարագրելու համար: Եվրոպականացումը՝ որպես «համապատասխանեցման բարդ մոդել և փոխազդեցության տրամաբանություն⁹⁴», կարող է դառնալ հետխորհրդային տրանսֆորմացիայի հնարավոր ուղիներից մեկը: Անցումային շրջանում գտնվող որոշ երկրների համար (Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, այդ թվում՝ Լատվիա, Լիտվա և Էստոնիա) դա տրանսֆորմացիայի հիմնական ուղին էր:

Վինկը և Գրացիանոն «Եվրոպականացումը» սահմանում են որպես ներքին հարմարվողականություն եվրոպական տարածաշրջանային ինտեգրմանը, որը ենթադրում է աշխարհագրորեն միմյանց մոտ գտնվող երկրների միջև տնտեսական և/կամ քաղաքական ավելի սերտ կապերի հաստատում⁹⁵: Այդ սահմանումը ներառում է եվրոպական ինտեգրման նախագծերի տարբեր ձևաչափեր (Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի շրջանակներում համագործակցություն, ԵՄ-ի հետ ասոցացված հարաբերություններ կամ «առանց անդամակցության ինտեգրման» այլ ձևեր): Հոդվածը մեծապես կենտրոնացած է ԵՄ-ի փոխակերպող ազդեցության վրա: Չնայած հետխորհրդային տարածքում ժողովրդավարական արժեքների խթանման գործում ԵՄ-ի դերը զգալի է (նախևառաջ, այնպիսի պարտադիր մեխանիզմների շնորհիվ, ինչպիսիք են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Մարդու

⁹³ **Radaelli C.**, Whither Europeanization? Concept Stretching and Substantive Change, *European Integration Online Papers* (EIoP), 2000, **4**, p. 3.

⁹⁴ **Radaelli C.**, Europeanisation: Solution or Problem? *European Integration online Papers* (EIoP), 2004, **8**, 16, p. 4, <http://www.eiop.or.at/eiop/pdf/2004-016.pdf> (15.10.2016).

⁹⁵ **Vink M. P., Graziano P.**, Challenges of a New Research Agenda, *Graziano P., Vink M. P. (eds), Europeanization: New Research Agendas?* Basingstoke, Palgrave Macmillan, 2007, pp. 3–20, pp. 7–8.

իրավունքների եվրոպական դատարանի վճիռները), այսօր կարելի է խոսել ԵՄ-ի և ԵԽ-ի համատեղ գործողությունների մասին՝ ուղղված իրավունքի գերակայության, ժողովրդավարության և արդյունավետ կառավարման, ինչպես նաև մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: ԵԽ-ի արժեքները և չափանիշները, լինելով ԵՄ անդամ երկրների ընդհանուր սահմանադրական ավանդույթների մի մաս, կազմում են եվրոպական սահմանադրական կարգի բաղկացուցիչ մաս: Հայաստանի ինտեգրման գործընթացներում սահմանադրական ինքնության դերակատարությունը և ԵՄ ազդեցությունը դիտարկելիս՝ հարկ է հաշվի առնել երկրի առանձնահատուկ աշխարհաքաղաքական իրավիճակը և ԵՄ-ի ու ԵԱՏՄ-ի միջև հավասարակշռության պահպանմանն ուղղված ջանքերը:

Անդրադառնալով ԵՄ սահմաններից դուրս «եվրոպականացման» մեխանիզմներին՝ Շիմմելֆենինգը, Մեդելմայերը և Լավենեքսն առաջարկում են առանձնացնել արտաքին կառավարման երեք ձև՝ ուղղված ԵՄ նորմերի ու օրենքների ներմուծմանը երրորդ երկրների իրավական համակարգեր: Դրանք են աստիճանակարգային (հիերարխիկ), ցանցային և շուկայական կառավարումը: Այդ ձևերից յուրաքանչյուրի դեպքում օգտագործվում են հստակ մեխանիզմներ (համապատասխանաբար՝ արտաքին խթաններ, սոցիալական ուսուցում և քաղած դասեր): Այդ մեխանիզմների կիրառման արդյունավետությունը կախված է, այսպես կոչված, «միջնորդ» գործոններից: Ստորև ներկայացված աղյուսակ 1-ը ամփոփում է առաջարկվող տեսական շրջանակը:

Աղյուսակ 1. Շիմմելֆենինգի, Սեդելմայերի և Լավենեքսի առաջարկած ԵՄ նորմերի ու օրենքների ներմուծման ձևեր և մեխանիզմներ⁹⁶

| Կառավարման ձև | Մեխանիզմներ | Պայմաններ և «միջնորդ» գործոններ |
|--|---|---|
| <p>Աստիճանակարգային (հիերարխիկ) կառավարում</p> <p>Կառավարման այս ձևին բնորոշ է «ԵՄ համայնքային մեթոդը»: Միաժամանակ, այն կիրառական չէ արտաքին հարաբերություններում (սահմանափակ թվով դեպքերի բնորոշ է միայն «քվազի-հիերարխիան»)</p> | <p>Այս ձևի որոշ տարրեր օգտագործվում են «պայմանակառության մեխանիզմի» (արտաքին խթանման մոդել), այդ թվում՝ շուկայի և արժեքների վրա հիմնված պայմանականության շրջանակներում: Գերիշխող տրամաբանությունը օգուտների դիմաց պարտադրանքի գործարքային ռազմավարությունն է⁹⁷:</p> | <p>Պետությունն ընդունում է ԵՄ նորմերը, եթե կառույցի առաջարկած օգուտները գերազանցում են ներպետական համակարգերի համապատասխանեցման և ուղղված ծախսերը: Ծախսերի և օգուտների հավասարակշռությունը կախված է 1) պայմանների հստակությունից, 2) օգուտների չափից և ստացման ժամկետներից, 3) սպառնալիքների և խոստումների արժանահավատությունից, 4) համապատասխանեցմանն ուղղված ծախսերի չափից⁹⁸</p> |
| <p>Ցանցային կառավարում</p> <p>Կառավարման այս ձևին բնորոշ է ներգրավված դերակատարների</p> | <p>Սոցիալականացում, սոցիալական ուսուցում և հաղորդակցություն</p> | <p>Ներգրավված դերակատարները մոտիվացվում են ներքին ինքնությամբ, արժեքներով և նորմերով: «Միջնորդ» գործոններ՝ 1)</p> |

⁹⁶ **Schimmelfenning F., Sedelmeier U.**, Governance by Conditionality: EU Rule Transfer to the Candidate Countries of Central and Eastern Europe, *Journal of European Public Policy*, 2004, **11**, 4, 661-679; **Lavenex S., Schimmelfenning F.**, EU Rules Beyond EU borders: Theorizing External Governance in European Politics. *Journal of European Public Policy*, 2009, **16**, 6, 791-812; **Lavenex S.**, A governance perspective on the European neighbourhood policy: integration beyond conditionality? *Journal of European Public Policy*, 2008, **15**, 6, 938-955.

⁹⁷ **Schimmelfenning F., Sedelmeier U.**, նշվ. աշխ., էջ 662:

⁹⁸ **Schimmelfenning F., Sedelmeier U.**, նշվ. աշխ., էջ 664-667:

| | | |
|---|--|---|
| <p>Ֆորմալ հավասարությունը: Այն հիմնված է կոնկրետ միջոցների կիրառման վերաբերյալ համաձայնության վրա</p> | | <p>լեզվիտիմություն (նորմերի ընդունման հավանականությունը, այդ հավանականության մեծացում, եթե դրանք ֆորմալ են, անդամ երկրները ևս ենթակա են դրանց, փոխառման գործընթացը բավարարում է բանակցային փուլի ընդհանուր չափանիշներին և այդ նորմերը պաշտպանում են նաև այլ միջազգային կազմակերպություններ), 2) ինքնություն (նորմերի ընդունման հավանականությունը կարող է մեծանալ թիրախային պետության և հասարակության՝ ԵՄ համայնքի հետ նույնականացմանը զուգահեռ, 3) ռեզոնանս (նորմերի ընդունման գործընթացն ավելի հեշտ է, եթե բացակայում են հակասող կամ ապալեզվիտիմացված ներպետական նորմեր), և եթե ԵՄ նորմերը կապված են գոյություն ունեցող կամ ավանդական ներպետական նորմերի հետ:⁹⁹</p> |
| <p>Շուկայական կառավարում ԵՄ-ը, դրա</p> | <p>Քաղաձ դասերը Պետությունը փոխառում է ԵՄ</p> | <p>Պետությունը պետք է (1)սկսի ոսումնասիրել դրսի նորմերն ու</p> |

⁹⁹ Schimmelfenning F, Sedelmeier U., նշվ. աշխ., էջ 667-668:

| | | |
|--|---|--|
| <p>գործընթացները և ռազմավարությունները կարող են օրինակ ծառայել նաև այլ տարածաշրջանների, պետությունների և հասարակական սուբյեկտների համար, որոնք կարող են դրանք դիտարկել որպես իրենց խնդիրների լուծման միջոց</p> | <p>նորմերը, եթե ակնկալում է, որ դրանք կարող են արդյունավետ կերպով լուծել ներպետական քաղաքականության և առնչվող խնդիրները¹⁰⁰</p> | <p>օրենքները, 2) ուսումնասիրությունները կենտրոնացնի ԵՄ քաղաքական համակարգի ուղղությամբ, 3) ԵՄ նորմերն ու օրենքները գնահատի ներպետական իրավիճակին համապատասխանության տեսանկյունից: Այդ իրավիճակը կախված է չորս գործոններից՝ քաղաքական դժգոհություններ, ԵՄ-ի շուրջ կենտրոնացած էպիստեմիկ համայնքներ, նորմերի ներմուծման հնարավորություն և վետոյի իրավունք ունեցողների շրջանակ:¹⁰¹</p> |
|--|---|--|

ԵՄ նորմերի ներմուծման այս եռաձև մոդելի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրություններ անել եվրոպականացման գործընթացներում «սահմանադրական ինքնության» դերակատարության վերաբերյալ՝ հողվածում ներկայացված բոլոր չորս չափումների համար:

Ինչպես ներկայացված է աղյուսակ 1-ում, պայմանականության մեխանիզմի կիրառման դեպքում նորմերի փոխառման արդյունավետությունը կախված է օգուտների և ծախսերի հավասարակշռությունից: ԵՄ-ի առաջարկած օգուտները կոնկրետ բարեփոխումների իրականացման դիմաց պետք է գերազանցեն ներպետական համակարգերի համապատասխանեցմանն ուղղված ծախսերը: «Արժեքային պայմանականության» դեպքում, ինչն ակադեմիական գրականության մեջ արժանացել է բազմաթիվ քննադատությունների, կառավարման այդ

¹⁰⁰ Schimmelfenning F, Sedelmeier U., նշվ. աշխ., էջ 669:

¹⁰¹ Նույն տեղում:

ձևի կիրառումն առանձնահատուկ խնդրահարույց է: Ակնհայտ է, որ բավարար չէ միայն պաշտոնապես ճանաչել ԵՄ-ի հիմքում ընկած արժեքները¹⁰²: Պահանջվում է այդ նորմերի արդյունավետ կիրառում, ինչն, իր հերթին, կախված է ներպետական դերակատարների կողմից դրանց պատշաճ տեղայնացումից¹⁰³:

Միաժամանակ, երբ սահմանադրության մեջ ամրագրված առանցքային արժեքների և հասարակության սահմանադրական ինքնության միջև կա զգալի անհամապատասխանություն, հնարավոր է, որ թիրախային կառավարությունն ավելի շահագրգռված լինի այդ իրավիճակի պահպանմամբ, քան արդյունավետ բարեփոխումների իրականացման դիմաց օգուտների ստացմամբ: Ըստ Շիմմելֆենինգի և Մեդելմայերի, ավտորիտար պետություններում արժեքների փոխառման ժամանակ ԵՄ-ի պայմանականությանը համապատասխանեցմանն ուղղված ներպետական քաղաքական ծախսերը չափազանց մեծ են: Ժողովրդավարական սկզբունքներից էլնելով՝ այդ կառավարությունները կարող են ստիպված լինել հրաժարվել այն մեխանիզմներից, որոնց վրա հենվում է իրենց քաղաքական իշխանությունը¹⁰⁴: Առանց արտաքին արժեքների պատշաճ տեղայնացման՝ «եվրոպականացմանն» ուղղված բարեփոխումները կարող են գործիքայնացվել ներպետական դերակատարների կողմից և գործող ավտորիտար կառավարություններին հնարավորություն տալ պայքարել իրենց քաղաքական ընդդիմադիրների դեմ՝ այդպիսով առաջացնելով, այսպես կոչված, «եվրոպականացման պաթոլոգիա»¹⁰⁵:

¹⁰² ՀՀ-ի դեպքում այդ արժեքները պաշտոնապես ճանաչվել են սահմանադրական մակարդակում և հռչակվել են որպես ընդհանուր արժեքներ ԵՄ-Հայաստան իրավական և քաղաքական փաստաթղթերում:

¹⁰³ **Gstöl S.**, The Contestation of Values in the European Neighbourhood Policy: Challenges of Capacity, Consistency and Competition, *Poli S. (eds), The European Neighbourhood Policy – Values and Principles*, Routledge, 2016. Importantly, the necessity to properly implement (not only declare and recognize) these values is underlined in the new EU-Armenia CEPA.

¹⁰⁴ **Schimmelfenning F., Sedelmeier U.**, նշվ. աշխ., էջ 670:

¹⁰⁵ **Börzel T., Pamuk Y.**, Pathologies of Europeanization: Fighting Corruption in the Southern Caucasus, *West European Politics*, 2011, **35**, 1, pp. 79-97; **Börzel, T., Pamuk, Y.** Europeanization Subverted? The European Union's Promotion of Good Governance and the Fight Against Corruption in the South Caucasus, KFG Working

Ներպետական դերակատարները կարող են իրականացնել նաև նորմերի տեղայնացում ցանցային կառավարման շրջանակներում՝ մասնավորապես սոցիալականացման, սոցիալական ուսուցման և հաղորդակցության միջոցով: Արժեքների խթանման տեսանկյունից դա կառավարման լավագույն ձևն է, քանզի այն ուղղված է փոխելու իրավական և քաղաքական մշակույթը՝ մտածելակերպի փոփոխության ճանապարհով: Աղյուսակ 1-ում ներկայացված «միջնորդ» գործոններից երկուսն առանձնահատուկ վերաբերում են սահմանադրական ինքնության հարցերին: Ըստ հեղինակների, նորմերի ընդունման հավանականությունը կարող է մեծանալ *թիրախային պետության և հասարակության՝ ԵՄ համայնքի հետ նույնականացմանը զուգահեռ*¹⁰⁶: Այլ կերպ ասած, այդ նույնականացման դեպքում հասարակությունն առանցքային եվրոպական արժեքներն ընկալում է որպես իր սեփական, այլ ոչ՝ դրսից պարտադրված արժեքներ, նույնիսկ այն դեպքում, եթե դրանք լիարժեք չեն կիրառվում պրակտիկայում: Ներպետական նորմերի հետ «ռեզոնանսը» կարող է պարզեցնել դրանց փոխառման գործընթացը: Եվրոպական նորմերի ընդունման հավանականությունն ակնհայտորեն ավելի մեծ է ներպետական նորմերի, մասնավորապես՝ Սահմանադրության ինքնության հիմքում ընկած դրույթների հետ համապատասխանության դեպքում:

Կառավարման շուկայական ձևի դեպքում ԵՄ-ն հանդիսանում է օրինակելի մոդել: Քաղած դասերի արդյունավետությունն այս դեպքում կախված է արտաքին ազդեցությունների նկատմամբ ներքին սահմանադրական կարգի բացության աստիճանից և նոր նորմերը պատշաճ տեղայնացնելու պատրաստակամությունից:

Եզրակացություն

Ամփոփելով հողվածում քննարկվող մոտեցումները՝ «սահմանադրական ինքնություն» բարդ հասկացությունը կարելի է ներկայացնել որպես մի քանի փոխկապակցված իմաստների համադրություն՝

1. Սահմանադրության ինքնություն՝ սահմանադրության մեջ ամրագրված հիմնարար սկզբունքներ և արժեքներ, որոնք բնորոշում են դրա առանձնահատուկ բնույթը:
2. Ժողովրդի կամ երևակայական քաղաքական հանրության սահմանադրական ինքնություն, որը զարգանում է երկխոսության ճանապարհով և ներկայացնում է քաղաքական նկրտումների և պարտավորությունների համադրություն, որն արտահայտում է ազգի անցյալը, ինչպես նաև հասարակության այն անդամներին, ովքեր ցանկանում են որևէ կերպ հաղթահարել այդ անցյալը: Դրա ակտիվ «կառուցողներից» են սահմանադրական դատարանի դատավորները:
3. Իրական քաղաքական հանրության կամ հասարակության սահմանադրական ինքնություն, որը տվյալ հասարակության սահմանադրական մշակույթի մաս է և ցույց է տալիս, թե արդյոք այն իրեն նույնականացնում է սահմանադրական հիմունքների հետ, թե գործում է անկախ՝ իր արժեքների ու պրակտիկայի զուգահեռ աշխարհում: Այլ կերպ ասած, իրական քաղաքական հանրության սահմանադրական ինքնությունը սահմանում է սահմանադրության մեջ ամրագրված ու ժողովրդի սահմանադրական ինքնության մեջ արտացոլված նորմերի և իրական սահմանադրական պրակտիկայի միջև համապատասխանության մակարդակը:
4. Սահմանադրական կարգի ինքնություն, որը սահմանում է դրա հարաբերություններն այլ միջազգային և վերազգային կարգերի հետ և դրա բացությունն արտաքին ազդեցությունների նկատմամբ:

Հետսոցիալիստական երկրների դեպքում «սահմանադրական ինքնություն» հասկացությունը կարող է ծառայել որպես արդյունավետ գործիք ոչ միայն այդ երկրներում տրանսֆորմացիայի գործընթացների առանձնահատկությունները բնորոշելու, այլև տարածաշրջանային ինտեգրման գործընթացները մեկնաբանելու համար: Ինտեգրման կոնկրետ նախագծի ուղղությամբ կողմնորոշումը որոշ դեպքերում կարող է լինել սահմանադրության կամ քաղաքական հանրության ինքնության բաղկացուցիչ մաս: Պետական սահմանադրական կարգի

համապատասխանությունը ինտեգրման նախագծի պահանջներին, իր հերթին, կախված է «սահմանադրական ինքնության» բոլոր չորս չափումներից: Եթե սահմանադրության ինքնությունը, ժողովրդի և իրական քաղաքական հանրության սահմանադրական ինքնությունն ազդում են համապատասխանեցման գործընթացների բովանդակության վրա, ապա սահմանադրական կարգի ինքնությունը և դրա բացությունն արտաքին ազդեցությունների նկատմամբ սահմանում են համապատասխանեցման մեխանիզմներն ու գործիքները:

«Սահմանադրական ինքնության» քառաչափ հասկացության ինտեգրումը ԵՄ սահմաններից դուրս եվրոպականացման գործընթացների հնարավոր մոդելներից որևէ մեկում թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանում, որտեղ ազգային սահմանադրական ինքնությունը զարգացման փուլում է, եվրոպականացման արդյունավետությունը կախված է մի քանի՝ երբեմն միմյանց հակասող, գործոններից: Այդ գործոնների միջև հակասությունը կարող է պայմանավորված լինել «սահմանադրական ինքնության» տարբեր չափումներին դրանց համապատասխանությամբ և այդ չափումներից յուրաքանչյուրի շրջանակում անցումային շրջանի փոփոխությունների տարբեր դինամիկայով:

Մի կողմից Հայաստանը հայտարարում է, որ պատկանում է եվրոպական ընտանիքին և հավատարիմ է եվրոպական արժեքներին, որոնք արտացոլված են սահմանադրության տեքստում և կազմում են Սահմանադրության ինքնության առանցքը, մյուս կողմից՝ իրական քաղաքական հանրության սահմանադրական ինքնության, իրավամտաճողության և սահմանադրական մշակույթի վրա շարունակում է զգալիորեն ազդել խորհրդային ժառանգությունը: Հայաստանի սահմանադրական կարգի բացությունն արտաքին ազդեցությունների նկատմամբ նպաստում է «երևակայական» քաղաքական հանրության սահմանադրական ինքնության հետագա զարգացմանը՝ միջազգային չափորոշիչների ճանաչման և Արևմուտքի լավագույն փորձի փոխառման ճանապարհով: Այդուհանդերձ, միշտ չէ, որ դա արտահայտվում է իրական քաղաքական հանրության սահմանադրական պրակտիկայում: Ավելին, այդ բացությունը կարող է նույնիսկ հանգեցնել «եվրոպականացման պաթոլոգիաների», երբ այն

գործիքայնացվում է իշխող վերնախավի կողմից՝ ի նպաստ սեփական շահերի:

‘Constitutional Identity’ in the Context of Post-Soviet Transformation, Europeanization and Regional Integration Processes. the case of Armenia

ANNA KHVOROSTIANKINA

*National University of “Kyiv-Mohyla Academy”, Ukraine
Brusov State University of Languages and Social Sciences, Armenia*

The purpose of this paper is to explore the existing scholarly approaches to the notion of constitutional identity and examine the potential applicability of this concept for the analysis of the processes of post-Soviet transformation, Europeanization and regional integration. Drawing upon the multiple definitions proposed in international academic literature, the author views ‘constitutional identity’ as a combination of four interrelated meanings: (1) as identity of a constitution; (2) as identity of the people, or imagined political community; (3) as constitutional identity of a society, or an actual political community and (4) as identity of a national constitutional order in its interrelations with other legal orders. It is argued that the concept of ‘constitutional identity’ taken in these four dimensions can serve as an effective analytical tool to characterize the transformation processes in the countries in transition – both those that run internally (e.g. transformation of constitutional culture) and those that have external relevance (e.g. regional integration). The paper reflects the initial stage of the research project; thus, the author does not have an ambition to cover the issue comprehensively, but introduces theoretical framework and poses the questions for further investigation.